ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

6 (85)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 6 (85), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 6 (85), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
«Թերիմացության էֆեկտը» 4

Նվարդ Մելքոնյան
Սուգեստիվ հնարքների կիրառումը մեդիա-տեքստերում 11

Սամվել Մարտիրոսյան
Համացանցի և բջջային կապի ներթափանցումը Հայաստանում 2016թ. 15

Արեստակես Միմավորյան
Սփյուռքի գիտնականների հետ Ադրբեջանի համագործակցության փորձերը.
որոշ դիտարկումներ 20

Արմեն Մանվելյան
Էներգետիկ գործոնը արդի միջազգային հարաբերություններում 30

Գեորգի Կոլարով
Խորհրդարանական ընտրությունները Մակեդոնիայի Հանրապետությունում 36

Արտյոմ Տեր-Հարությունյան
Քաղաքական ծայրահեղականությանը և ահաբեկչությանը
հակազդելու որոշ հարցեր 48

Հուշագիր հեղինակին 57

«ԹԵՐԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԷՖԵԿՏԸ»[1]

- Պրն Հարությունյան, «Նորավանք» ԳԿՀ և ՄԱԿ առաջատար փորձագետ Արա Մարջանյանի հետ Դուք հրապարակել եք հոդված, որում ներկայացված է իրավիճակը տարբեր երկրներում գիտելիքների հասարակության կառուցման հետ կապված: Ի՞նչ եզրահանգումների եք եկել:

- Դա մեր հերթական աշխատանքն է, որում փորձ է կատարվում կյանքի կոչել թվում է, թե ակնհայտ այն թեզը, համաձայն որի՝ գլոբալ զարգացումների օրինաչափությունները պայմանավորված են որոշումներ ընդունող անձանց, կազմակերպությունների և այն հասարակությունների տեղեկացվածության, գիտելիքների մակարդակով, որոնք նրանք ներկայացնում են: Որպես չափանիշներ մենք օգտագործել ենք ՀՆԱ-ն, մարդկային ռեսուրսները, երկրի մակերեսը, գիտական հետազոտություններին, փորձարարակոնստրուկտորական մշակումներին ուղղված ծախսերը և այլն: Ընդունելով, որ այսօր առաջատարը «անգլոսաքսոնական աշխարհն է», մենք նշել ենք, որ «գիտելիքների արտադրության» առումով նրան արդեն հասնում է և, հավանաբար, շուտով առաջ կանցնի «հիերոգլիֆների աշխարհը»՝ Չինաստան, Կորեա և Ասիայի արագ զարգացող այլ պետություններ: Իսկ հետխորհրդային հանրապետությունները և «սլավոնական աշխարհը» նկատելիորեն հետ են մնում իրենց արևմտյան և արևելյան մրցակիցներից:

- Դուք «սլավոնական աշխարհը» համեմատում եք «անգլոսաքսոնականի» հետ, բայց չէ՞ որ հետխորհրդային տարածքը բնավ էլ լիովին սլավոնական չէ...

- Այո, բայց ողջ «խորհրդային աշխարհը», ներառյալ «սոցճամբարի» երկրները, գտնվել են Ռուսաստանի ազդեցության տակ: Այժմ այդ աշխարհը փլուզված է, Ռուսաստանը կորցրել է իր ազդեցությունը հետխորհրդային երկրների մեծ մասում, փոխվել է արժեհամակարգը. գիտելիքները,

[1] «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրեն Գագիկ Հարությունյանի հետ հարցազրույցը վարեց Գայանե Սարմաքեշյանը:

կրթվածությունը դադարել են դիտարկվել որպես որոշիչ չափանիշներ որոշումներ ընդունող մարդկանց ընտրելիս: Գիտելիքների արտադրությունը կորցրել է գերակայությունը, ինչն ազդել է կրթության համակարգի վրա նրա բոլոր մակարդակներում: Իսկ երբ հետընթաց է ապրում գիտակրթական համակարգը, կազմալուծման գործընթացը տարածվում է պետական ամբողջ համակարգի վրա:

- Ստիպված ենք ընդունել, որ գիտելիքների կարևորության գնահատման իմաստով կոմունիստներն ավելի հեռատես էին:

- Ավելի քան: Հեղափոխությունից անմիջապես հետո սկսեց գործել «լիկբեզի» ծրագիրը, քաղաքացիական պատերազմի, ավերածությունների և սովի պայմաններում Ռուսաստանում հիմնվեցին տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ, իսկ արդեն 1975թ. ԽՍՀՄ-ում աշխատում էր գիտնականների համաշխարհային ողջ հանրույթի 25%-ը, այսինքն՝ մոտ 1 մլն մարդ: Գիտական մշակումների թվով ԽՍՀՄ-ը երկրորդն էր աշխարհում, իսկ մի շարք ուղղություններով առաջ էր Արևմուտքից: Գիտաշխատողների համար ստեղծված էին առավելագույնս բարենպաստ պայմաններ, գիտնականի կարգավիճակը հասարակությունում չափազանց բարձր էր: Իսկ ինչ վերաբերում է կոնկրետ Հայաստանին, ապա դեռևս 20-ական թթ. հանրապետության կառավարության նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը կազմակերպեց հայկական ծագում ունեցող շատ գիտնականների և մասնագետների վերադարձը հայրենիք: Այդ մարդիկ հսկայական հեղինակություն ունեին, նրանց համար ստեղծվեցին բոլոր պայմանները՝ ստեղծագործ աշխատանքի համար, այդ պատճառով էլ Երկրորդ Հանրապետությունը հասավ շատ մեծ հաջողությունների: Ի դեպ, վերջերս «Նորավանքում» մենք քննարկում էինք «մասնագիտական հայրենադարձության» խնդիրը, և դա ֆանտաստիկ չի հնչում երկրում հայտնի միգրացիոն հոսքերի համապատկերում: Հայտնի է, որ «մարդկային կապիտալի» ներմուծումն առավել շահութաբերներից է բիզնեսում, որը թույլ է տալիս նվազագույն ներդրումներով հասնել մեծ հաջողությունների տնտեսությունում:

- Բայց տարիներ են անցել, և հենց խորհրդային մտավորականությունը, գիտելիքի տիրապետող մարդիկ են դարձել ընդդիմություն...

- Այո, լիբերալ տրամադրված մտավորականությունը դարձավ հեղափոխական այն դասը, որը փլուզեց ԽՍՀՄ-ը: Բայց «թերիմացությունը» միշտ հանգեցնում է վատ հետևանքների: Ինչպես մտավորական հեղափոխականները, այնպես էլ կուսակցական «նոմենկլատուրայի» ներկայացուցիչներն ադեկվատ պատկերացումներ չունեին ինչպես սեփական երկրի, այնպես էլ Արևմուտքի մասին. մենատիրական գաղափարախոսական համակարգում հասարակագիտական գիտությունները ԽՍՀՄ-ում թույլ էին զարգացած, իսկ խորհրդային լրատվամիջոցները Արևմուտքը ներկայացնում էին բացառապես անշահավետ լույսով, ինչն ընկալվում էր ճիշտ հակառակ ձևով և նպաստում էր կապիտալիստական աշխարհի իդեալիստական ընկալմանը:

- Եվ այդ ամբողջ խառվքը աջակցվում էր Արևմուտքի կողմից, որը շահագրգռված էր ԽՍՀՄ փլուզմամբ և միաբևեռ աշխարհի ստեղծմամբ...

- Այո: Եվ երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց, գրեթե ողջ հետխորհրդային տարածքում տեղի ունեցավ հասարակության «դեինդուստրիալացում»: Վերացվեց ողջ արդյունաբերությունը, նոր առաջնորդները կոչ էին անում զարգացնել տուրիզմը, ծառայությունների ոլորտը, առավելագույնը՝ սննդարդյունաբերությունը, իսկ փակված գիտահետազոտական ինստիտուտների փոխարեն ի հայտ եկան հազարավոր իրավապաշտպան կազմակերպություններ, ձևավորվեց նոր միագաղափարախոսական, այս անգամ՝ ազատական, համակարգ, որը արևմտյան հեղինակավոր փորձագետների մի զգալի հատվածի համոզմամբ, նույնպես դատապարտված է փլուզման:

- Ասվում էր, որ Հայաստանը կարող է ապրել հենց միայն «Ջերմուկով», իսկ արևմտյան փորձագետները խորհուրդ էին տալիս մասնագիտանալ լոլիկի մածուկի արտադրության մեջ: Գիտական պոտենցիալն առհասարակ չէր դիտարկվում որպես հանրապետության զարգացման գործոն, ինչը հանգեցրեց բավական տխուր տնտեսական և սոցիալական հետևանքների: Ըստ երևույթին, Արևմուտքի առաջադրած խնդիրն իրականացվել է:

- Ճիշտ է: Գիտաշխատողների և ինժեներների թիվը Երրորդ Հանրապետությունում կրճատվել է մոտ 8 անգամ: Ի հայտ է եկել տաքսիների

վարորդների, մատուցողների, «գիշերային թիթեռնիկների» մի ամբողջ զանգված... Մենք ոչ միայն առաջ չենք գնացել մեր զարգացման մեջ, ինչպես սպասում էին լիբերալ ռոմանտիկները, այլև խիստ հետ ենք գլորվել: Ամենավտանգավոր փոփոխությունները տեղի ունեցան հասարակության գիտակցության մեջ, իսկ պետությունը չկարողացավ պաշտպանել առողջ գերակայությունները: Գերակշռեց սպառման հասարակության գաղափարախոսությունը, մարդու արժանիքներն սկսեցին որոշվել նրա գնողունակությամբ: Տգիտությունը դադարեց ամոթալի համարվել: Այս խնդիրների արմատները գտնվում են սպառման հասարակության գաղափարախոսությունում, ինչը հանգեցնում է նաև քաղաքական էլիտաների դեգրադացիային անգամ այսպես կոչված «առաջավոր դեմոկրատիայի» երկրներում: Մինչդեռ այսօր ընթանում է գլոբալ աշխարհակարգի ֆրագմենտացիա, ի հայտ են գալիս նոր դերակատարներ հասարակություն ձևավորող նոր գաղափարախոսությամբ, որոնք ի վիճակի են ստեղծագործական արտադրանք տալ: Հենց այդ կարողությունն էլ այսօր որոշում է հասարակության որակն ու նրա զարգացման հեռանկարները: Ի դեպ, այսօր նախկին շատ այլախոհներ կարծում են, որ խորհրդային տարիները դարձել են լուսավորության դարաշրջան Ռուսաստանի համար: Դրան դժվար է չհամաձայնել: Խորհրդային հասարակությունը լավ կրթված էր, բազմակողմանիորեն զարգացած և բարձր էր գնահատում գիտելիքները: Կրթվածությունն ու պրոֆեսիոնալիզմը անձի գնահատման և պաշտոնեական նշանակումների հիմնական չափորոշիչներն էին:

- Այսօր Հայաստանում այդ չափանիշներն անտեսվում են, նման մոտեցման արդյունքներն ակնհայտ են: Լավատեսական կանխատեսումների հիմքեր չկան:

- Ես չեմ կարծում, թե ամեն ինչ կորած է: Մի շարք ցուցանիշներով մենք առաջ ենք անցնում որոշ հետխորհրդային երկրներից: Բայց իրավիճակն ընդհանուր առմամբ լավատեսություն չի ներշնչում և իրադրությունը շտկելու համար անհրաժեշտ է անհապաղ մշակել համապատասխան ռազմավարություն: Ամեն տեսակ վարկանիշների սուբյեկտիվությունը հանրահայտ է, բայց չարժե դրանք լիովին անտեսել: Երևանի պետական

համալսարանը զբաղեցնում է 2099-րդ տեղն աշխարհում, իսկ թուրքական բուհերը զբաղեցնում են 491-841-րդ տեղերը, Թուրքիայի պետական համալսարանը զբաղեցնում է 135-րդ տեղը: Այնտեղ հաջողությամբ գործում են մոտ հարյուր «ուղեղային ֆաբրիկաներ», որոնց արտադրանքը պահանջված է քաղաքական էլիտայի կողմից: Սա պետք է մտահոգի Ցեղասպանություն ապրած ժողովրդին:

- Ի՞նչ պետք է անել ստեղծված իրավիճակում:

Մեր օտարերկրացի գործընկերները հաճախ են հետաքրքրվում, թե ինչու զարգացած երկրների հայկական համայնքները լավ են ապրում, ակտիվ գործունեություն են ծավալում, այնտեղ լավ կրթված մարդիկ, մասնագետներ կան, իսկ Հայաստանում իրավիճակն այսպես աննախանձելի է: «Նորավանքը» տվյալներ է հավաքել ավելի քան 600 հայ մասնագետների մասին հիմնականում հասարակագիտության ոլորտում: Այս ռեսուրսն անհրաժեշտ է օգտագործել ի շահ Հայաստանի, նախագծեր կազմել: Կրկնել այն, ինչը ժամանակին հաջողվեց Մյասնիկյանին, հիմա իրական չէ, չկան ա՛յն ռեսուրսներն ու այլ պայմաններ: Բայց գործել այս ուղղությամբ անհրաժեշտ է:

- Ենթադրենք անհնարինը. լավ մասնագետները որոշել են գալ Հայաստան... Իսկ հասարակությունը կընդունի՞ նրանց: Պետությունը կապահովի՞ աշխատանքով, կգնահատի՞: Տեսեք, թե ինչ վիճակում են տեղի լավագույն մասնագետները:

- Դա ամենաբարդ պահն է: Ես դա կանվանեի «թերիմացության էֆեկտ»: Ոչ գրագետ անձը հավակնություններ չունի: Իսկ «թերիմացները» այսօր գերակշռում են հասարակությունում և նրանց թվում է, թե իրենք ամեն ինչ գիտեն: Իսկ եթե նրանք նաև լուրջ լիազորություններ ունեն, եթե նրանք են կայացնում որոշումները, ապա արդյունքները հաճախ լավը չեն լինում: Առանց գիտելիքների և ադեկվատ գերակայությունների ոչինչ չի ստացվի: Այսօր բարձրակարգ համալսարան ստեղծելն իրական չէ, ուստի մենք առաջարկում ենք, օգտագործելով սփյուռքի մտավոր ռեսուրսները, կազմակերպել առցանց հետազոտական համալսարան: Ծախսերը շատ ավելի քիչ կլինեն, իսկ արդյունավետությունը՝ բարձր: Ի

դեպ, արևմտյան ներդրողներն այսօր հսկայական միջոցներ են ներդնում առցանց ուսուցման մեջ:

- Դա դիտարկվում է որպես գիտելիքներ ստանալու լրացուցիչ հնարավորություն՞ն, թե՞ ուսուցման պարտադիր մաս:

- Նման ուսուցման հայեցակարգ մենք մշակել ենք: Բայց պետք է «աշխատեցնել» այդ մտահղացումը, սկզբում ունենալ ոչ մեծ աշխատակազմ և հնարավորություն՝ ըստ արժանվույն վճարելու օտարերկրացի և հայ լավագույն մասնագետների դասախոսությունները: Հայաստանում բուհի դասախոսի, գիտնականի ներկա վարձատրությունը ցածր է ձմռանը կոմունալ սպասարկումների արժեքից: Սա գիտական անարդյունավետ քաղաքականության վկայությունն է: Այնինչ, ոչ միայն Արևմուտքը, այլև Ռուսաստանը գիտության ու կրթության հարցերին մեծ ուշադրություն է հատկացնում, ընկալվում է նրանց ռազմավարական կարևորությունը: Սկզբնական շրջանում մենք այդ դասախոսությունները կտեղադրենք *Youtube*-ում:

- Մարդը խոր գիտելիքներ կստանա, կդառնա մրցունակ մասնագետ և անմիջապես էլ կհեռանա...

- Այդ հարցերը առկա են, բայց այստեղ պետք է աշխատի ընդունակ և ստեղծագործ մարդկանց կոլեկտիվի սիներգիկ էֆեկտը: Եթե հավաքվի լավ կրթված մարդկանց կրիտիկական զանգված, ի հայտ կգան գործարարներ, ովքեր կկառուցեն ոչ միայն հյուրանոցներ ու ռեստորաններ: Նրանք կիմանան որտեղ ներդնել միջոցները՝ շատ ավելի մեծ շահույթ ստանալու համար:

- Մեծ գիտելիքներ ունեցող մարդուն պետք է ավելին վճարել, քան թերիմացին, նրա մտավոր արտադրանքը պետք է պահանջված լինի, նրա երաշխավորությունները պետք է լսելի լինեն...

- Համաձայն արդի չափանիշների՝ հասարակության որակը որոշվում է նրանով, թե որքանով է այն տեղեկատվական: Եթե մենք աշխարհում 115-րդն ենք ՀՆԱ-ով, նշանակում է՝ այդ ցուցանիշը մեզ մոտ լավ չէ: Պետք է հավակնոտ խնդիրներ առաջադրել: Առանց գիտելիքների, գիտության, կրթության արդյունավետ համակարգի ոչինչ չի ստացվի:

- Բայց ոչ ոք չի ձևակերպել, թե ինչ հասարակություն ենք մենք կառուցում, ինչ տնտեսություն պետք է ունենանք...

- Որովհետև չկան այդ հարցերն առաջադրել կարողացող մարդիկ, այստեղ նորից աշխատում է գիտելիքների օրենքը: Մտավոր գործունեության ոլորտը՝ գիտություն, կրթություն, տեխնոլոգիաներ, յուրատեսակ էկոհամակարգ է, իսկ երբ որևէ համակարգ անսարք է, հիմնված ոչ ճիշտ սկզբունքների վրա, նրա առանձին հատվածներում բեկումն անհնար է: Ավանդական գործընկերը, ում հետ կարող ենք հաջող զարգանալ, Ռուսաստանն է: Դեպի Արևմուտք կողմնորոշումն այս ոլորտում լի է լուրջ խնդիրներով, այնտեղ շահագրգռված չեն մեր երկրի տիպի երկրների զարգացմամբ: Բայց մեզ մոտ շատ բան է արվում արևմտյան դեղատոմսերով, իսկ արդյունքները գոհացուցիչ չեն: Հայտնի են արևմտյան մի ամբողջ շարք նախագծեր, որոնք ուղղված են հետխորհրդային երկրների գիտատեխնոլոգիական համակարգերի փլուզմանը, որոնք իրագործվում են նաև այսօր: Ցավոք, մեզ մոտ գրեթե բացակայում է գիտական քաղաքականությունը, պետությունը գիտնականների առջև ոչ մի խնդիր չի դնում, պետպատվերը գիտության մեջ բացակայում է: Անհրաժեշտ են գիտական և քաղաքական ընտրանիների համատեղ ջանքերը՝ ուղղված ռազմավարական կարևոր նպատակների ձեռքբերմանը: Ուրախալի է, որ կան որոշակի տեղաշարժեր ռազմարդյունաբերական ոլորտում, բայց հարկավոր են պետպատվերներ նաև այլ ուղղություններով, հարկավոր է բարձրացնել գիտության վարկը, հասարակությունը պետք է գիտությունն ընկալի որպես զարգացման կարևորագույն գործոն: Մենք իրականացրել ենք Հայաստանի տեղեկատվական տարածքի հետազոտություն և պարզել, որ հեռուստաալիքներում գրեթե բացակայում են գիտահանրամատչելի հաղորդումները, մեր հասարակությունը քիչ բան գիտի հայ գիտնականների հաջողությունների և խնդիրների մասին: Մնում է հուսալ, որ զարգացման վերջերս հնչեցված նոր ծրագիրը մեր հասարակության, պետական կառույցների առջև հավակնոտ նպատակներ կդնի, որոնց ձեռքբերումը կպահանջի գիտելիքների ներգրավում, գիտնականների և մասնագետների ամենաակտիվ մասնակցություն:

ՍՈՒԳԵՍՏԻՎ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԵԴԻԱ-ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Նվարդ Մելքոնյան[*]

ԶԼՄ-ում կիրառվող մանիպուլյատիվ հնարքները հաճախ նպատակաուղղված են հոգեբանական ազդեցության իրագործմանը: Մեդիա-տեքստերի ազդեցությունը տարածվում է ոչ միայն անհատի գիտակցականի վրա, այլև ընդգրկում է հուզական տիրույթը՝ ներշնչելով մանիպուլյատորի կողմից նախատեսված զգացմունքներ ու հույզեր՝ դրդելով համապատասխան գործողությունների[1]:

Որպես հոգեբանական ազդեցության առավել արդյունավետ տեխնիկա՝ կարելի է առանձնացնել ներշնչումը կամ սուգեստիան:

Սուգեստիա տերմինն առաջացել է լատիներեն *suggestio*՝ ներշնչում[2] հասկացությունից: Ժամանակակից ընկալումների համաձայն՝ դա անձին ուղղված ազդեցությունն է, որը հանգեցնում է.

- անձի որոշակի վիճակի, զգացմունքի, վերաբերմունքի ձևավորմանը՝ անկախ նրա կամքից և գիտակցությունից,
- անձի կողմից որոշակի գործողության իրականացմանը, որն անմիջականորեն չի համապատասխանում մինչ այդ նրա կողմից ընդունված նորմերին, գործունեության սկզբունքներին, դիրքորոշումներին:

Գրականության մեջ առանձնացվում են սուգեստիայի հետևյալ տեսակները.

1. ***Ուղիղ սուգեստիա***, որն իր հերթին բաժանվում է.

- *Իմպերատիվ կոորդինացված սուգեստիա:* Սա անձի վրա սթրեսային ազդեցության տեսակ է, որն ավտորիտար, դիրեկտիվ բնույթ ունի:

[*] ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, սոց.գ.թ.:

[1] Տե՛ս *Должикова С.Н.,* Манипулятивные стратегии медиатекста // Научно-практический журнал Краснодарского филиала РГТЭУ «Сфера услуг: инновации и качество», Выпуск №3, г. Краснодар, 2011.

[2] Ներշնչումը մեկ կամ մի քանի անձանց (սոցիալական խմբի) վրա խոսքի, գործողությունների և արտահայտիչ շարժումների օգնությամբ կատարվող այնպիսի ներգործություն է, որը շրջանցում է ներշնչվողի գիտակցությունն ու կամքը և հանգեցնում ներշնչողի համար ցանկալի գործողությունների, մտքերի, մտապատկերների և համոզմունքների առաջացման:

Իրագործվում է կտրուկ, հակիրճ, հաճախ մի քանի անգամ կրկնվող արտահայտությունների միջոցով և ուղեկցվում է ժեստերի, դիմախաղի և ինտոնացիայի ազդակներով: Այս տեսակը երբեմն անվանում են սուգեստիայի հայրական մեթոդ:

- *Սուգեստիվ հրահանգներ:* Սրանք ազդում են զգացմունքների, դիրքորոշումների և վարքի դրդապատճառների վրա: Իրականացվում են հանգիստ, մեղմ տոնով: Միապաղաղ են, նույնպես հաճախակի կրկնվող:

2. ***Միջնորդավորված սուգեստիա***. վերաբերվում է ոչ բացահայտ կերպով հաղորդվող տեղեկատվությանը. չի գիտակցվում ազդեցության օբյեկտի կողմից և հիմնականում աննկատորեն է ընկալվում:
ԱՄՆ Արիզոնայի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Չալդինին նկարագրել է 5 հիմնական սկզբունք, որոնք հնարավորություն են տալիս ազդելու անձի գիտակցության վրա[3]: Դրանք են.

- ***Փոխադարձ փոխանակման սկզբունք***. Նպատակն անհատի մեջ երախտագիտության զգացում ձևավորելն է և դրդումն է փոխադարձ ծառայություն մատուցելուն: Օրինակ՝ զանգվածային լրատվամիջոցները լսարանին ներշնչում են երախտագիտության, շնորհակալ լինելու զգացում նշված քաղաքական ուժի հանդեպ՝ որոշակի զիջումների գնալու կամ բնակչությանն արտոնություններ տրամադրելու համար: Արդյունքում՝ լսարանում ձևավորվում է պարտավորվածություն՝ չդժգոհել որոշակի քայլերից կամ սատարել այդ գործիչներին քաղաքական պայքարում: Հաճախակի փոխանակումն անհամաչափ և անարդար է լինում: 2017թ. ՀՀ ԱԺ ընտրությունների քարոզարշավի ընթացքում նման հնարքների հաճախ էին դիմում ինչպես առանձին ընտրատարածքներից նախկինում ընտրված պատգամավորները՝ հիշեցնելով իրենց արածն ընտրողների համար, այնպես էլ խոշոր կուսակցությունների և դաշինքների առաջնորդները (այստեղ կարելի է առանձնացնել «Ծառուկյան» դաշինքի նախագահի գործունեությանը և իր անձին երախտագիտություն հայտնող ընտրողներին հաճախ ընդգրկելը քաղաքական գովազդային հոլովակներում):
- ***Հետևողականության սկզբունք:*** Շատերը, երբ կայացնում են որոշում կամ որևիցե քայլ են կատարում, ամեն կերպ փորձում են

[3] Տե՛ս *Robert B. Cialdini,* Influence. Science and Practice, 4th ed., Boston: Allyn&Bacon, 2001.

պաշտպանել իրենց դիրքորոշումը: Այս հնարքի միջոցով անձին դրդում են որոշակի խոստում տալուն և հետևաբար դրան հավատարիմ լինելուն: Ի դեպ, առավել անդրժելի խոստումները հանրային խոստումներն են: Օրինակ՝ մարդը, որը մեկ անգամ որևէ հարցում որոշակի քաղաքական ուժի իր աջակցությունն է հայտնում, հաճախ ստիպված է լինում հետևողական երևալու համար սատարել այդ ուժին այլ՝ ավելի սկզբունքային հարցերում:

- ***Սոցիալական ապացույցի սկզբունք:*** Մարդիկ, հատկապես երբ իրենք էլ վստահ չեն իրենց որոշման մեջ, հաճախ նմանակում են ուրիշների ռեակցիաները և արարքները: Նմանակման սկզբունքը հաճախ է խաղարկվում ԶԼՄ-ում: Հեռուստատեսությամբ հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես են տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչները նմանատիպ դատողություններ հնչեցնում կամ զանգվածային միջոցառումների մասնակցում:
- ***Բարիդրացիական վերաբերմունքի սկզբունք***: Ավելի հեշտ է «այո» ասել կամ համաձայնել այն անձանց հետ, որոնք համակրելի են: Այս պարագայում լրատվամիջոցները տեղեկատվությունը տարածում են հասարակության սերը վայելող անձանց՝ աստղերի միջոցով: Նման միտումը նկատելի է դառնում նախընտրական քարոզարշավների ժամանակ. հանրահայտ մարդկանց ներգրավումը հաղորդումներում, քաղաքական գովազդներում, հանրահավաքներում:

  Որպես նման հնարքի կիրառման օրինակ կարելի է բերել 2017թ. ՀՀ ԱԺ ընտրությունների ՀՀԿ նախընտրական գովազդային հոլովակներում Լ.Արոնյանին, «Ռեինկարնացիա» խմբին, Ն.Հախնազարյանին, Արթուր Աբրահամին և այլոց ներկայացնելը:
- ***Հեղինակության ներգրավում:*** Ռ.Չալդինին անդրադառնում է նաև այս հնարքին՝ ասելով, որ, ըստ հետազոտողների, մարդիկ, առավել ևս, երբ իրենց անիրազեկ են զգում որոշ հարցերում, ավելի հակված են վստահելու իրենցից ավելի բարձր դիրք, կարգավիճակ, կոչում ունեցող մարդկանց: Սրա օրինակներն են, երբ լրատվամիջոցները բարդ հարցերի քննարկմանն ու պարզաբանմանն են ներգրավում փորձագետների:

  Ընդունված է նախընտրական քարոզարշավներում անդրադառնալ

հեղինակություն վայելող հետազոտական ընկերությունների իրականացրած հետազոտություններին՝ թեկնածուների վարկանիշները ներկայացնելու նպատակով: 2017թ. ԱԺ ընտրությունների ժամանակ էլ կարելի էր տեսնել միջազգային հանրահայտ հետազոտական ընկերությունների ներկայացուցիչների ասուլիսները (*ВЦИОМ, Gallup International Association* և այլն):

- ***Դեֆիցիտի՝ սակավության սկզբունք:*** Այստեղ հիմնական նպատակը սահմանափակ առաջարկի տպավորություն ստեղծելն է, ինչը պայմանավորում է լսարանում արհեստական պահանջմունքի ձևավորում, քանի որ մարդիկ միշտ ձգտում են ունենալ այն, ինչը սահմանափակ քանակով է կամ դժվար հասանելի: Այսպես, օրինակ, լրատվամիջոցները կարող են կեղծ հետապնդումների, զանգվածների կողմից չհասկացված, թշվառ լինելու կամ քննադատության պատրանք ձևավորելու միջոցով գրավել լսարանի ուշադրությունն ու հետաքրքրությունն այդ անձանց կամ ուժերի հանդեպ: Այս հնարքի տարբեր մոդիֆիկացիաներին էին դիմել «Ծառուկյան» դաշինքը, «ՕՐՕ» և «ԵԼՔ» դաշինքները 2017թ. ԱԺ ընտրությունների նախընտրական փուլում:

Ներշնչման կամ սուգեստիայի ազդեցության արդյունավետությունը, ըստ հետազոտողների, գլխավորապես կախված է սուգեստիվ ազդեցության մեթոդների կիրառությունից, որտեղ կարևոր է համարվում ոչ այնքան տեղեկատվության բովանդակությունը, որքան դրա ներկայացման ձևը, զգացմունքային հատկանիշները, արտահայտչականությունը: Այլ կերպ ասած՝ ավելի մեծ ազդեցություն ունի ոչ թե այն, թե «ինչ է ասվում», այլ այն, թե «ինչպես է ասվում»:

Լեզվական միջոցներով սուգեստիվ ազդեցության մասին խոսելիս, ուշադրություն ենք դարձնում ոչ թե իրականության օբյեկտիվ նկարագրությանը, այլ դրա սուբյեկտիվ մեկնաբանության տարբերակներին: Ներշնչման լեզվական հնարքները թույլ են տալիս միևնույն երևույթը տարբեր կերպ ներկայացնել, ինչը հնարավորություն է ընձեռում ստեղծելու իրականության արհեստական պատկերներ[4]:

[4] *Малинин А.В.,* «Социология рекламного воздействия», Питер, 2005, с. 168.

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԵՎ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2016Թ.

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանում համացանցի ներթափանցումը շարունակում է աճել, սակայն աճի տեմպերը նվազել էին, իսկ շարժական կապում նկատվել են տնտեսական խնդիրներ։

Ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ. եզրափակիչ տվյալների[1].

- Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների թվաքանակը (այդ թվում՝ շարժական 3G և 2G) 2016թ. կազմել է 2411519, որը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 9.6%-ով։
- Ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների թվաքանակը (ներառյալ՝ շարժական 3G) 2016թ. կազմել է 1911089, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների թվաքանակի աճ 26%-ով։

2016-ը հեղափոխական 2009-2010 թվականներից հետո ցույց է տվել լայնաշերտ ինտերնետի ամենակտրուկ աճը Հայաստանում. աճը կազմել է մոտ 400 հազար բաժանորդ։ Ստորև բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների թվաքանակի 2008-2016թթ. աճի դինամիկան (տե՛ս *Նկար 1*)[2].

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ։

[1] Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի գործունեության հաշվետվություն, http://psrc.am/images/docs/reports/Report_2016.pdf

[2] Նույն տեղում։

Նկար 1

Հայաստանում լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների թվաքանակի 2008-2016թթ. աճի դինամիկան՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալներով



Սակայն, եթե դիտարկենք ինտերնետ կապ մատակարարողների, բջջային օպերատորների տվյալները, ապա հասկանալի է դառնում, որ բջջային կապի շուկայում երկրորդ տարին է՝ իրավիճակը բարդ է, աճի մասին խոսել չի կարելի, հակառակը, ինչ-որ առումով նկատվում է անկում: Շարժական կապը չի դիմանում ներշուկայական մրցակցությանը և ճնշմանը ինտերնետային մեսենջերների շփման ոլորտում: Որպես հետևանք երեք բջջային օպերատորներն էլ ունեն ֆինանսական անկում (տե՛ս *Նկար* 2)[3].

[3] Ինչպես է նվազել բջջային կապի 3 օպերատորների հասույթը 2017թ. առաջին եռամսյակում (գծապատկեր), http://b4b.am/archives/news/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%A7-%D5%B6%D5%BE%D5%A1%D5%A6%D5%A5%D5%AC-%D5%A2%D5%BB%D5%BB%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BA%D5%AB-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-%D5%B0%D5%A1

Նկար 2

Բջջային օպերատորների հասույթի անկումը 2017թ. առաջին կիսամյակում՝ ըստ B4B.am-ի



Ստորև բերենք հիմնական ցուցանիշները, որոնք վերաբերում են 2016թ. տարեկան ցուցանիշներին: Բոլոր տվյալները վերցված են կազմակերպությունների պաշտոնական հաշվետվություններից, որոնք հրապարակվում են եռամսյակը մեկ և տեղադրվում կազմակերպությունների կայքերում (տվյալները վերցված են *2017թ. առաջին կիսամյակից: Աճը փակագծերում համեմատվում է 2016 թվականի երկրորդ եռամսյակի տվյալների հետ*).

Բջջային կապի բաժանորդագրություններ

Բջջային կապի ընդհանուր բաժանորդների թիվը կազմել է 3 401 419 - բացասական աճը 2014թ. համեմատ կազմել է 32 977:

Բաշխումն ըստ օպերատորների.

- Vivacell - **2 074 429 (-9 733)**
- Beeline - **876 360 (+12 798)**
- Ucom (former Orange) - **450 630 (-36 042)**

Նկար 3

Բջջային կապի բաժանորդների բաշխումն ըստ օպերատորների, 2016թ.



Ինտերնետի սպառում. հիմնական տվյալներ

- Լայնաշերտ կապի բաժանորդագրություններ. **261 784 (+15 395)**
- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ» (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների). **231 698 (- 25 912)**
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով). **1 661 946 (+39 229)**

Ընդհանուր շարժական ինտերնետի բաժանորդագրություններ. **2 155 428 (+28712)**

Տվյալներն ըստ մատակարարների.

Armentel -

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ» (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների). - **143 035** (*տվյալները՝ 2016թ. չորրորդ եռամսյակ)* **(+1 198)**

- Շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրություններ. 58 582 **(+15 938)**
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով). **346 850 (+8 955)**

Vivacell -

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների). **58 582** (*տվյալները՝ 2016թ. առաջին եռամսյակ)* **(- 9 649)**
- Տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ (հեռախոսի միջոցով). **1 260 872 (+201 794)**

Ucom -

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների). - 91 142 **77 954** (*տվյալները՝ 2017թ. մարտի 31-ի, ներառում են նաև Interactive կազմակերպության բաժանորդներին, որոնք միավորվել են)* **(+8 062)**
- Շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրություններ. **124 664 (+3 841)**
- Բջջային հեռախոսներով ինտերնետից օգտվողները. **271 973 (+7000)**

Rostelecom -

- Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրություններ. - **40 625 (+5 481)**

Փաստացի, ինտերնետ ծառայությունների տեսանկյունից նկատվում է ակտիվ աճ, մյուս կողմից՝ շարժական կապի ոլորտում, հակառակը, անկում է արձանագրվում: Հաշվի առնելով, որ հիմնական դերակատարները երկու ոլորտն էլ ներկայացնում են, ուստի շարժական կապի ճգնաժամը կարող է նաև հարվածել ինտերնետ կապի զարգացմանը:

ՍՓՅՈՒՌՔԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐԸ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Արեստակես Միմավորյան[*]

Վերջին տարիներին Ադրբեջանը որպես ռազմավարական անհրաժեշտություն ակտիվացնում է կապերը սփյուռքի հետ՝ դիտարկելով այն ինչպես սեփական երկրի զարգացման այլընտրանքային ռեսուրս, այնպես էլ արտաքին քաղաքականության կարևոր «գործընկեր»՝ փորձելով վերջինի միջոցով ամրապնդել իր միջազգային հեղինակությունը։ Երկրի արտաքին քաղաքականության ռազմավարության համաձայն՝ իրականացնում է սփյուռքին իր առանցքի շուրջը համախմբելու տարատեսակ միջոցառումներ, պետություն-սփյուռք հարաբերություններին նոր լիցք հաղորդելու նպատակով մշակվում են համագործակցությանը միտված ռազմավարական նոր ուղղություններ, գործադրվում են որոշակի ջանքեր սփյուռքում առկա մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ, որում ներգրավված են և՛ պետական գերատեսչություններ, և՛ հանրային քաղաքականություն իրականացնող սուբյեկտներ։ Այնպես որ, օտարերկրյա համայնքների ներքին համախմբման, ամրապնդման և զարգացման գործը, քաղաքական, տնտեսական և գիտական ներուժից օգտվելու խնդիրը, գոյապահպանական սպառնալիքներն ու համայնքային ինքնակազմակերպման նոր հնարավորությունները և դրանցից ածանցված այլ հիմնահարցեր, կարելի է ասել, բարձրացվել են պետական քաղաքականության մակարդակի։

Ադրբեջանը սփյուռքյան քաղաքականությունում, այլ ուղղություններին զուգահեռ (թուրք-ադրբեջանական համագործակցություն, սփյուռքում մեդիա-քաղաքականության ակտիվացում և այլն), փորձում է ընդլայնել և զարգացնել սփյուռքի հետ կապերի ոլորտը՝ ի դեմս գիտական սփյուռքի, հետապնդելով հետևյալ հեռահար նպատակները.

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար։

- Ներդնել նրանց ստացած գիտելիքները, փորձը և կարողությունները երկրի տնտեսական, գիտակրթական ոլորտների բարեփոխման և կրիտիկական ենթակառուցվածքների զարգացման գործում: Դա բացատրվում է նրանով, որ ներկայում քաղաքական, տնտեսական և տեխնիկական գիտություններում, կառավարման, ճարտարագիտական գիտակարգերում ակադեմիական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի հաստատությունները համապատասխանաբար բախվում են դասախոսական ու բարձրորակ մասնագետների սակավության խնդրին:
- Նրանց միջոցով հաստատել միջազգային կապեր արտասահմանյան բուհական և գիտատեխնիկական նշանակության հաստատությունների հետ:
- Ադրբեջանցիների համար գիտական սփյուռքը այլ տեսանկյուններից ևս առանձնահատուկ նշանակություն ունի: Մի կողմից՝ պաշտոնական Բաքուն ձգտում է նրանց վրա դնել արտերկրի համայնքների կազմակերպման-համախմբման աշխատանքների իրագործումը, մյուս կողմից՝ ներգրավել նրանց Արցախի հակամարտության հետ կապված լոբբիստական-քարոզչական աշխատանքներում, դիվանագիտական ջանքերի զարգացման և ամրապնդման գործում:

Վերոհիշյալի իրականացման ուղղությամբ հստակեցվել են գիտական սփյուռքին առնչվող ռազմավարական նպատակները, մշակվել համագործակցության ընդունելի մեխանիզմներն ու այն ապահովող համապատասխան գործիքները: Հարկ է նշել, որ գիտական սփյուռքի հետ հարաբերություններում այստեղ գործում է «վերևից ներքև ռազմավարությունը» (կենտրոնացված մոտեցում), որտեղ փոխգործակցության գլխավոր դերակատարները պետական գերատեսչական կառույցներն ու հարցով շահագրգիռ գիտական հաստատություններն են:

Առաջին նման քայլերից կարելի է համարել 2010թ. *«2009-2015թթ. Ադրբեջանի Հանրապետության գիտության զարգացման ազգային ռազմավարության»* շրջանակներում կրթության նախարարության, Ադրբեջանի ԳԱԱ, Ադրբեջանի սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմի-

տեի, Տեղեկատվական տեխնոլոգիաների և Տուրիզմի ինստիտուտների կողմից ստեղծված *«Ադրբեջանի գիտատեխնիկական սփյուռք»* պորտալը, որը սփյուռքի և Ադրբեջանի գիտնականների միջև երկխոսության և համագործակցության հարթակի դեր պետք է կատարեր: Ավելի լայն իմաստով պորտալի ստեղծումը հետապնդում էր մի քանի նպատակներ. ստանալ քանակական գնահատականներ գիտական սփյուռքի որոշ չափորոշիչների ու սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների վերաբերյալ, պարզել Ադրբեջան վերադառնալու հնարավորությունները և տեղի գիտնականների հետ համագործակցության հեռանկարները: Այդ նպատակների իրականացման համար նախնական փուլում պորտալի առջև դրվեցին մի քանի առաջադրանքներ, որոնք կազմում էին գործունեության հիմնական ուղղությունները.

- արտերկրում գիտատեխնիկական ոլորտներում աշխատող ադրբեջանցի մասնագետների վերաբերյալ տեղեկատվական բազայի (ընդհանուր տեղեկություններ, հրատարակությունների ցանկ, կոնտակտային տվյալներ և այլն) ստեղծում,
- պորտալի տեղեկատվական աջակցման ստեղծում և պորտալի մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում,
- ադրբեջանական սփյուռքի խնդիրներով հետաքրքրվողներին, առաջին հերթին՝ կառավարական մարմիններին, ոչ կառավարական կազմակերպություններին, սփյուռքի հետ աշխատողներին օգնության ցուցաբերում՝ համապատասխան տեղեկատվություն ստանալու գործում,
- ադրբեջաներենով ինտերնետ ռեսուրսների հարստացում[1]:

Այնուհետև, գիտությանը մոտ կանգնած այլ կառույցներ ևս՝ որպես առանձին ինստիտուցիոնալ միավորներ, ձեռնարկեցին համագործակցությանը միտված քայլեր, որոնք ամրագրված էին պետական ռազմավա-

[1] "Azərbaycanın elmi diasporu" layihəsi çərçivəsində İnternet portalı yaradılıb, http://www.muallim.edu.az/www.old/arxiv/2010/09/09-18.htm, Elmi diaspora ilə bağlı internet portalın təqdimatı keçirildi, http://old.525.az/view.php?lang=az&menu=8&id=7141&type=1#gsc.tab=0, http://ito.su/main.php?pid=26&fid=8509

րական նշանակության փաստաթղթերում: Օրինակ՝ *«Ադրբեջանի ազգային ակադեմիայի զարգացման հայեցակարգով (մինչև 2020թ.)»* նախատեսվում է ԳԱԱ-ն համալրել սփյուռքի բարձր որակավորում ունեցող մասնագետներով՝ երկրի գիտական ներուժի մեծացման համար[2], ներգրավել արտերկրի սփյուռքյան կադրերին դրամաշնորհային նախագծերի փորձաքննության, գիտական առաջնահերթությունների որոշման, երիտասարդ գիտնականների համար կարճաժամկետ ուսուցողական ծրագրերի իրականացման գործում, ինչպես նաև հիմնել *«Ադրբեջանցի գիտնականների սփյուռք»* կոչվող տեղեկատվական համակարգը[3]: Բացի վերոհիշյալից, Ադրբեջանի նախագահին առընթեր *«Գիտության զարգացման հիմնադրամը»* ստեղծել է արտերկրում և Ադրբեջանում գիտության տարբեր ասպարեզներում աշխատող ամենաակտիվ գիտնականների և մասնագետների էլեկտրոնային շտեմարաններ:

Դիտարկումներ աշխարհագրական սփռվածության շուրջ

Գիտական սփյուռքի ձևավորումն անմիջականորեն կապ ունի «ուղեղների արտահոսքի» հետ, և այստեղ ամենևին էլ նշանակություն չունի՝ անհատական նախաձեռնությամբ, թե պետական տարբեր ծրագրերով են հեռացել, քանի որ այդ սփյուռքն առաջին հերթին կազմավորվում է հենց այդ գործընթացների հետևանքով, հատկապես այնպիսի դիասպորաների դեպքում, որոնք դասական չեն, այլ նորաստեղծ են, ինչպիսին ադրբեջանականն է:

Ադրբեջանցի մասնագետների գնահատականներով՝ արտերկրում «կուտակված» գիտական ներուժը կազմում է «դիասպորայի» կարևոր բաղադրիչներից մեկը, որը ձևավորվել է միգրացիոն գործընթացների հետևանքով:

ԽՍՀՄ փլուզման սկզբնական շրջանում Ադրբեջանից արտագաղթած մասնագետների ճնշող մեծամասնությունը նախընտրել է հեռանալ

[2] 2-3 тысячи работников НАНА могут попасть под сокращение, http://ru.apa.az/novosti-azerbaydjana/sotsium/2-3-tysyachi-rabotnikov-nana-mogut-popast-pod-sokrashenie.html

[3] Yannis Kechagiaras, “Engaging the Scientific Diaspora from EaP countries, ERC EaP Countries Regional Event, 20-21 April 2017, Tbilisi, https://erc.europa.eu/sites/default/files/events/docs/07_Yannis_Kechagiaras.pdf

հիմնականում հետևյալ ուղղություններով՝ ՌԴ, Թուրքիա և Իրան[4]: Առաջին նման դեպքերը գրանցվեցին ԽՍՀՄ փլուզման և դրան հաջորդող տարիներին, հատկապես, որ ՌԴ-ում հաստատված մասնագետները չունեին լեզվական խոչընդոտներ: Բացի լեզվական գործոնից, առանձնակի նշանակություն ուներ այն հանգամանքը, որ ադրբեջանական գիտությունը, լինելով խորհրդային գիտական համակարգի մաս, ամենևին էլ խորթ չէր վերջիններիս համար, քանի որ նրանցից շատերը կրթություն էին ստացել խորհրդային հանրապետությունների համալսարաններում, ինչը նպաստում էր արագ ինտեգրվելու այդ երկրի գիտական համակարգին: Համաձայն ադրբեջանցի մասնագետների՝ Ռուսաստան են արտագաղթել ֆինանսական ճգնաժամի և սոցիալ-տնտեսական անկայունության հետևանքով գործունեությունը դադարեցրած գիտաուսումնական հաստատություններում աշխատող ռուսախոս, հիմնականում՝ հումանիտար գիտությունների և էլեկտրոնիկայի ոլորտների մասնագետները, մոտավորապես գիտնականների մեկ հինգերորդ մասը[5]:

Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի երկրներից ուղեղների արտահոսքի տեսանկյունից առաջատար դիրքեր է զբաղեցնում Թուրքիան, որին հաջորդում է Իրանը: 1990-ական թթ. սկզբին աշխատանք փնտրելու նպատակով Թուրքիա մեկնեցին հիմնականում ֆիզիկոսներ ու մաթեմատիկոսներ: Գիտնականների թիվը համալրվեց նաև հաջորդող տարիներին Թուրքիայի կողմից իրականացված *«Ուսանողական մեծ նախագիծ»* ծրագրի շրջանակներում բարձագույն կրթություն (բակալավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա) ստանալու նպատակով Ադրբեջանից ներգրավված շուրջ 2000 ուսանողների հաշվին: Նրանց մի մասը բարձրագույն կրթություն ստանալուց հետո աշխատանքի տեղավորվեց Թուրքիայի առաջատար համալսարաններում և գիտահետազոտական ինստիտուտներում[6]: 2011թ. տվյալներով՝ Անկարայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնում արդեն աշխատում էին 80-ից

[4] *Борисенко А.И.,* Интеллектуальная миграция на постсоветском пространстве: региональный обзор, http://www.fundeh.org/publications/articles/177/

[5] *Сулейманов Абульфаз Давуд Оглы,* Социологический анализ интеллектуальной миграции Азербайджана, Sociology of Science And Technology. 2010. Volume 1. No. 1 , c. 111.

[6] Նույն տեղում:

ավելի ադրբեջանցիներ՝ Թուրքիայի ռազմարդյունաբերական համալիրի կառուցման և զենքերի արդիականացման ոլորտներում[7]: Մյուս կողմից՝ կրթություն ստացող երիտասարդ կադրերի շրջանում նկատվում էին նոր միտումներ. Թուրքիան վերածվեց հարթակի երրորդ երկրներ տեղափոխվել ցանկացող ադրբեջանցիների համար, որոնք մեկնում էին արևմուտք ինչպես աշխատանք փնտրելու, այնպես էլ մասնագիտական աճի նպատակով: Ամեն դեպքում, Ադրբեջանը որոշակի պարիտետ է պահպանել դեպի Թուրքիա գնացող և վերադարձող գիտնականների հարցում[8]: Նկատելի է ադրբեջանցի մասնագետների, հատկապես քաղաքագետների և միջազգայնագետների առկայությունն ինչպես բուն Թուրքիայում, այնպես էլ վերջիններիս ֆինանսավորմամբ արտերկրում հիմնադրված «ուղեղային կենտրոններում»: Թուրքական և ադրբեջանական սփյուռքերի միջև բոլոր ճակատներով ընթացող սերտ համագործակցությունը տեղավորվում է այսպես կոչված «թյուրքական սփյուռքի» ռազմավարական կառավարման տեսլականում: Այստեղ հարկ է հատուկ անդրադառնալ թուրքական և ադրբեջանական սփյուռքերի վերաբերյալ Իլհամ Ալիևի առաջ քաշած տեսակետին, որը բացահայտում է այդ համագործակցության էությունն ու կարևորությունը՝ *«մեկ ազգը երկու սփյուռք չի կարող ունենալ»*, ինչը բխեցվում է *«մեկ ազգ՝ երկու պետություն»* կարգախոսից:

Հետխորհրդային երկրներից և Թուրքիայից հետո մասնագետների համար հեռանկարային էին համարվում Իրանն ու Իսրայելը: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ աշխատանք փնտրելու նպատակով 1999թ. Ադրբեջանից Իսրայել է արտագաղթել բնագիտության ոլորտի 93, 2010թ.՝ 47, 2011թ.՝ 58 մասնագետ, որոնց մի մասն աշխատում է կենսաբանական հետազոտությունների ոլորտում, մյուս մասը՝ ռազմարդյունաբերական ձեռնարկություններում[9]: Ի տարբերություն Իսրայելի, ուր հիմնականում տեղափոխվել են բնագիտության և գիտատեխնիկական ոլորտի մասնագետներ, ԻԻՀ-ում սկզբնական շրջանում մեծ տեղ է հատկաց-

[7] Утечка мозгов, http://www.zerkalo.az/2012/utechka-mozgov/ (07.09.2012)

[8] Научная диаспора и развитие российского сектора исследований и разработок, «Экономика образования», № 4, 2008.

[9] Утечка мозгов, http://www.zerkalo.az/2012/utechka-mozgov/ (07.09.2012)

վել հումանիտար ոլորտի հետևյալ մասնագետներին՝ իրավաբաններին, պատմաբաններին, քաղաքագետներին և այլն[10]: 2012թ. տվյալներով՝ Թեհրանում գործող «Շահիդ Բագիրի» ռազմարդյունաբերական համալիրում, Կարաջի միջուկային հետազոտությունների և «Ճառագայթ» գիտահետազոտական կենտրոններում աշխատել են Ադրբեջանի բժշկական և Բաքվի պետական համալսարանների 1995-2010թթ. շրջանավարտները՝ 58 մասնագետ[11]: 1990-ականների վերջերից ադրբեջանական գիտական սփյուռքի քարտեզը կրեց որոշակի փոփոխություններ, այն արդեն ընդգրկում էր աշխարհագրական ավելի լայն տարածք, մասնավորապես նկատվում էր ուղեղների արտահոսք դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ (Գերմանիա), ավելի ուշ՝ ԱՄՆ, Կանադա և այլն: Այս երկրներ հիմնականում արտագաղթել են բժիշկներ, ինժեներներ, լրագրողական, ՏՏ և այլ ոլորտների մասնագետներ[12]:

Գիտական սփյուռքը մասամբ համալրվել է նաև պետական/միջպետական գիտակրթական ծրագրերով[13] արտերկրում (շուրջ 30 պետությունների առաջատար համալսարաններում) կրթություն ստացած այն երիտասարդ գիտնականների հաշվին, ովքեր նախընտրել են չվերադառնալ: Մասնագիտական առաջնահերթությունների շարքում այս ծրագրերով նախապատվություն է տրվել հետևյալ ոլորտներին՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա, բժշկություն, ճարտարագիտություն, գյուղատնտեսություն, անասնաբուժություն, բնապահպանություն, տնտեսագիտություն, անձնակազմի կառավարում, մշակույթ և տուրիզմ[14]:

---

[10] *Сулейманов Абульфаз Давуд Оглы*, Социологический анализ интеллектуальной миграции Азербайджана, Sociology of Science And Technology. 2010. Volume 1. No. 1 , с. 112.

[11] Утечка мозгов, http://www.zerkalo.az/2012/utechka-mozgov/ (07.09.2012)

[12] «Утечка мозгов» из Азербайджана обретает массовый характер: из страны «убегают» квалифицированные медики, http://www.panorama.am/ru, (02/05/2017).

[13] Այդ ծրագիրն իրականացվել է 2006թ. հոկտեմբերի 19-ին Ադրբեջանի նախագահի N1746 հրամանագրով հաստատված *«Արտասահմանյան երկրներում Ադրբեջանի երիտասարդության ուսումնառության պետական ծրագրի»* շրջանակներում:

[14] Особенности азербайджанской системы образования, http://moscow-baku.ru/opinions/aktualno/osobennosti-azerbaydzhanskoy-sistemy-obrazovaniya/

2010-2016թթ. արտերկրում կրթություն ստացած ադրբեջանցի ուսանողների թվաքանակն ըստ երկրների (առաջին տասնյակ)[15]

Երկրներ	*2010/2011*	*2011/2012*	*2012/2013*	*2013/2014*	*2014/2015*	*2015/2016*
Թուրքիա	839	842	877	1024	866	907
Մեծ Բրիտանիա	136	213	267	499	570	621
Գերմանիա	111	168	278	351	325	316
Ռուսաստան	507	335	314	377	303	247
Կանադա	36	87	129	179	189	195
Նիդերլանդներ	22	25	27	67	72	139
Շվեյցարիա	11	24	41	68	86	82
Ավստրալիա	6	17	20	53	61	72
ԱՄՆ	25	30	36	58	63	57
Ֆրանսիա	54	50	43	44	53	54

Ինչպես նշում են ադրբեջանցի մասնագետները, այս ծրագրերին դիմող ուսանողներն այն դիտել են ոչ միայն արտերկրում կրթության միջոցով մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված բացառիկ հնարավորություն, այլև երկրից ընդմիշտ հեռանալու միջոց[16]: Այդ իսկ պատճառով տվյալ երևույթի վերացման նպատակով մշակվեցին մեխանիզմներ. մասնավորապես՝ ուսանողների հետ կնքվում են վերադարձի և երկրի գիտական համակարգերում պարտադիր աշխատանքի անցնելու մասին պայմանագրեր[17]: Սակայն, հաշվի առնելով, որ ընդունված մեխանիզմները կիրառության մեջ են մտել բավական ուշ, սկզբնական

[15] Տե՛ս http://webcache.googleusercontent.com/search?q=cache:fjw8KrANmp8J:www.stat.gov.az/source/education/en/001_8.25en.xls+&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am

[16] *Мариам Г. Сеидбейли,* Научная диаспора как ресурс развития отечественной науки, Проблемы деятельности ученого и научных коллективов, Институт истории естествознания и техники им. С.И. Вавилова РАН, Номер: 1 (31), 2015, с. 18.

[17] *Мариа Кело, Флора Дюбоск,* Управление человеческими ресурсами в государственном высшем образовании в странах-партнерах Tempus, Справочный документ, Кишинев 22-23 Апреля 2013, с.12.

շրջանում արտերկրում կրթություն ստացած ուսանողները համալրեցին ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող տասնամյակում երկրից հեռացած մասնագետների շարքերը՝ նոր որակ հաղորդելով ադրբեջանական սփյուռքին։

Ամփոփում

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ԽՍՀՄ փլուզմից ի վեր միգրացիայի հետևանքով երկրից հեռացած և արտերկրի գիտական հաստատություններում աշխատող մասնագետների հետ տարբեր ձևաչափերով համագործակցելու և նրանց ներուժն օգտագործելու ուղղությամբ Ադրբեջանը ձեռնարկում է որոշակի քայլեր։ Այս ամենով հանդերձ, գիտական սփյուռքի և ընդհանրապես սփյուռքի հետ կապերի ոլորտում Ադրբեջանը բախվում է մի շարք արտաքին և ներքին խոչընդոտների, որոնցից են.

- Սփռվածության տեսանկյունից ադրբեջանական գիտական սփյուռքը թեև զբաղեցնում է բավական լայն աշխարհագրական տարածք՝ Հս. Ամերիկայից մինչև Ավստրալիա, սակայն առ այսօր արտերկրում չեն ստեղծվել մասնագետներին մեկ հարկի տակ համախմբող սփյուռքյան գիտական կառույցներ (*Scientific Diaspora Organizations*), չհաշված մշակութային նշանակության սփյուռքյան կառույցները, ինչը ցույց է տալիս, որ կոնկրետ երկրում գիտական ներուժը կուտակված չէ մեկ վայրում, այլ ցրված է տարբեր կենտրոններում՝ դժվարացնելով այդ հանրույթների կոնսոլիդացումը։
- Մյուս կողմից, թեև միգրացիայի հետ կապված խնդիրները մշտապես գտնվել են այդ երկրի մասնագիտական շրջանակների և պատկան մարմինների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, ելնելով խնդրի հետ կապված մասնագիտական քննարկումներից ու իրականացվող միջոցառումներից, բացակայում են արտերկիր հեռացած գիտական/մասնագիտական ներուժին առնչվող հստակ վիճակագրական տվյալներ, չկան գիտական սփյուռքի վերաբերյալ քանակական և որակական գնահատականներ, ինչն իր հերթին մասնակիորեն դժվարացնում է քարտեզագրել և հաշվառել եղած կադրերը։ «Ադրբեջանցի գիտնականների սփյուռք» կոչվող տեղե-

կատվական համակարգի և պորտալի աշխատանքներն ուղղված են առաջին հերթին այդ ցուցանիշների գնահատմանը: Անհայտ է մնում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո այդ երկրից հեռացած հրեա[18], ռուս և այլ ազգության մասնագետները արդյո՞ք քանակական ցուցանիշների գնահատման դեպքում համարվելու են ադրբեջանական գիտական սփյուռքի մաս: Ադրբեջանցի հետազոտողներն իրենց ուսումնասիրություններում շրջանցում են այդ հարցը:

- Ձեռնարկվող քայլերի տրամաբանությունը վկայում է, որ Ադրբեջանը, արտերկրի գիտնականներին տեղեկատվական ցանցերի միջոցով և գիտական համագործակցության այլ ձևերով հեռավար համախմբման աշխատանքներից զատ, հետապնդում է նաև նրանց վերադարձնելու քաղաքականություն: Սակայն հաշվի առնելով գիտական համակարգում առկա բյուրոկրատիան, կոռուպցիան, այդ երկրում սկիզբ առած ֆինանսական ճգնաժամը և բազմաթիվ այլ կազմակերպչական բնույթի խնդիրները, որոնց մասին բարձրաձայնում են այդ երկրի գիտնականները, և այն հանգամանքը, որ դեռևս շարունակվում է երիտասարդ կադրերի արտագաղթը Ռուսաստան և Արևմուտք, այս պահի դրությամբ ինտելեկտուալ ներուժի ինտեգրման միջոցներից կարող է գործել առաջին տարբերակը: Այլ հարց է, թե այդ համագործակցությունից ինչ արդյունքներ կգրանցվեն:
- Ընդհանուր խնդիրների մեջ կարելի է նշել Սփյուռքի տարբեր շերտերի (աշխատանքային միգրանտներ, գործարարներ, գիտական հանրույթ և քաղաքական վտարանդիներ)՝ ալիևյան ռեժիմի, նրա վարած արտաքին և ներքին, սփյուռքի նկատմամբ իրականացվող պետական քաղաքականության նկատմամբ դժգոհությունը, ինչը հանգեցնում է որոշակի խզման պետություն-սփյուռք գործակցությունում:

[18] ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանից Իսրայել է արտագաղթել 80 հազար մարդ, հիմնականում հրեաներ:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ[1]

Արմեն Մանվելյան[*]

Արդեն նշել են նավթային շուկայի, դրա առանձնահատկությունների և արդի միջազգային հարաբերությունների վրա վերջինի ազդեցության որակների մասին: Այժմ կանդրադառնանք էներգետիկ բնագավառի ամենաարագ աճող շուկաներից մեկի՝ գազի շուկայի առանձնահատկություններին և հիմնախնդիրներին, որոնց դերն արդի միջազգային հարաբերություններում օրեցօր աճում է, հետևաբար՝ այն մանրակրկիտ ուսումնասիրման, քննարկման ու վերլուծության կարիք ունի: Սակայն, մինչև գազի գործոնի ազդեցությանն անդրադառնալը, հարկավոր է առանձնացնել մի շարք կարևոր ուղղություններ, որոնք ձևավորում են միջազգային ներկա հարաբերությունները՝ պայմանավորված էներգետիկ գործոնով:

Միջազգային հարաբերություններում էներգետիկ գործոնի դերը հասկանալու համար հարկավոր է նախ և առաջ առանձնացնել այդ գործոնի ազդեցության մի շարք ուղղություններ.

1. էներգակիրներ արդյունահանող և սպառող պետությունների միջև միջպետական հարաբերություններ,
2. միջպետական հարաբերությունները ձևավորվում են նաև արդյունահանող և սպառող պետությունների շահերը ներկայացնող միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ *OPEC-ի (organization of the petroleum export countries)* և *IEA-ի (international energy agency)* միջև նույնպես,
3. արդյունահանող և սպառող պետությունների ու նրանց շահերը ներկայացնող միջազգային կառույցների ներսում ձևավորվում է հարաբերությունների մի որակ, որը շատ դեպքերում արտահայտվում է այդ պետու-

[1] Մաս 2, սկիզբը՝ նախորդ համարում:

[*] Էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության մասնագետ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.:

թյունների միջև ընթացող սուր մրցապայքարի տեսքով, որտեղ հաճախ այդ կառույցները (*OPEC* և *IEA*) միջնորդ կազմակերպությունների դեր են ստանձնում այդ լարվածությունները մեղմելու համար,

4. և վերջապես հարաբերությունների, կարելի է ասել, չորրորդ որակը ձևավորվում է էներգետիկ շուկայի ազդեցության շնորհիվ, որն իր առանձնահատկությամբ ազդում է թե՛ սպառող և թե՛ արդյունահանող պետությունների վրա՝ ստիպելով նրանց ստեղծել միջպետական հարաբերությունների նոր որակ՝ սեփական շահերն այդ շուկաներում առաջ մղելու համար։

Այս՝ չորրորդ տիպի հարաբերություններն իրենց հերթին կարելի է բաժանել ըստ էներգետիկ շուկաների՝ պայմանավորված դրանց տեսակով, ծավալներով, զարգացման դինամիկայով և ազդեցությամբ ընդհանուր համաշխարհային շուկայում.

1. նավթի շուկա,
2. գազի շուկա,
3. ածխի շուկա,
4. միջուկային վառելիքի շուկա,
5. վերականգնվող էներգետիկայի շուկա։

Այս շուկաների ներքին զարգացումը, օրինակ՝ գնագոյացման գործընթացը, իր հերթին ազդում է այդ շուկայում ընթացող մրցակցության և դրանում ներգրավված պետությունների հարաբերությունների որակի վրա։

Գազի շուկան և դրա առանձնահատկությունները

Գազի շուկան աչքի են ընկնում իր, այսպես կոչված, ոչ կազմակերպվածությամբ։ Ի տարբերություն նավթի, գազի ընդհանուր համաշխարհային շուկա որպես այդպիսին գոյություն չունի։ Այսինքն՝ չկա գազի միասնական շուկա, և գոյություն չունի գազի գնի ձևավորման մեկ միասնական մեխանիզմ, հետևաբար՝ գազի գներն աշխարհի տարբեր տարածաշրջաններում իրարից էականորեն տարբերվում են։ Գազն, ի տարբերություն նավթի կամ ածխի, բորսայական ապրանք չէ, և նրա համաշխար-

հային գները չեն ձևավորվում Նյու Յորքի կամ Լոնդոնի բորսայում: Չնայած նկատենք, որ նույն այդ Նյու Յորքի բորսայում վաճառվում է նաև գազ, որի գինն այս պահին (12.06.2017թ.) մոտ $120 է 1000 մ^3-ի դիմաց (3.04 USD/MMBtu)[2]: Բայց սրանք միայն ներամերիկյան գներ են, և դա, ի տարբերություն նավթի, ոչ մի կերպ չի ազդում այդ ապրանքի՝ գազի համաշխարհային գները ձևավորելու վրա:

Ստեղծված իրավիճակի պատճառներից մեկը գազի միասնական շուկայի բացակայությունն է, ինչն էապես ազդում է այդ ապրանքի նկատմամբ դասական՝ առաջարկ-պահանջարկ բանաձևով գնի ձևավորման մեխանիզմն օգտագործելու համար: Այսինքն՝ այս ապրանքի գնի ձևավորման գործում մեծ է արդյունահանող ու մատակարարող պետությունների դերը, որոնք շատ դեպքերում ուղղակիորեն կարողանում են գին թելադրել սպառող պետություններին այդ էներգակիրը կայուն ներմուծելու համար: Այլ կերպ ասած՝ գազի գնի ձևավորման գործում մեծ է քաղաքական գործոնի դերը, ինչը հնարավորություն է տալիս մատակարար պետություններին այն որպես զենք օգտագործել իրենց սեփական քաղաքական շահերն առաջ մղելու համար:

Նմանատիպ քաղաքականության դասական օրինակ է Ռուսաստանը, որն իր գազը տարբեր պետությունների վաճառում է տարբեր գներով, որոնք երբեմն մինչև 50% տարբերություն են տալիս: Գնային այս քաղաքականության մեջ Ռուսաստանը շարժվում է՝ ելնելով իր քաղաքական շահերից, այդ պետությունների հետ դաշնակցային ու ռազմավարական հարաբերություններից և այլն: Այսպես, վերլուծելով նախկին ԽՍՀՄ երկրներին կամ Եվրամիության անդամ պետություններին վաճառվող գազի գինը՝ կարելի է նաև կանխատեսել այդ պետությունների հետ Ռուսաստանի հարաբերությունների մակարդակը: *Նկար 1*-ում ներկայացված է ռուսական գազի գինը 2010թ. դրությամբ, այսօր այն մոտ երկու անգամ նվազել է՝ պայմանավորված նավթի գների անկմամբ, սակայն աղյուսակն արտացոլում է հարաբերությունների այն մակարդակը և որակը, որը Ռուսաստանի Դաշնությունն ուներ տվյալ պետությունների հետ 2010թ. դրությամբ:

[2] Crude Oil & Natural Gas, https://www.bloomberg.com/energy

Նկար 1

Ռուսական գազի գինը ԱՊՀ և եվրոպական մի շարք պետությունների համար[3]

Այսինքն՝ գազը որպես «զենք» օգտագործելու մարտավարությունը պայմանավորված է հենց այդ շուկայի անկատարությամբ՝ մեկ միասնական առևտրային հարթակի բացակայությամբ, ինչը հնարավորություն չի տալիս գազի գնագոյացման շուկայական մեխանիզմներ ձևավորել: Այս իրավիճակը նաև զրկում է սպառող պետություններին գնագոյացման գործընթացի վրա ազդելու հնարավորությունից և թուլացնում է նրանց դիրքերը գազի շուկայում: Նկատենք, որ, օրինակ, նավթի շուկայում մեծ է սպառող պետությունների դերը՝ հաշվի առնելով վերջիններիս ազդեցությունն այդ ապրանքի գնագոյացման վրա, սակայն գազի դեպքում նման հնարավորություն սպառողները գոնե առայժմ չունեն:

[3] Global Trade Markets-2010.

Գազի գները նաև տարբերվում են աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Այսպես, եթե ԱՄՆ-ում գազի գինը բավական էժան է, ապա Ճապոնիայում այն քառակի թանկ է, Եվրոպայում ավելի միջինացված գներ են, ու այսպես շարունակ: Մեր հարևան Իրանը գազը Թուրքիային վաճառում է մոտ $400-ով 1000մ^3-ի դիմաց: Ադրբեջանը Վրաստանին գազը վաճառում է $215-ով, իսկ Թուրքիային՝ մոտ $290-ով:

Այսպիսով, գազի միասնական շուկայի բացակայությունը թույլ չի տալիս ձևավորել գազի գնի ձևավորման միասնական մեխանիզմ, չնայած դրան ուղղված աշխատանքեր տարվում են: Եվրամիությունն իր էներգետիկ, ավելի ճիշտ կլինի ասել՝ գազի կախվածությունը Ռուսաստանից նվազեցնելու համար փորձում է ձևավորել գազի եվրոպական միասնական շուկա: Ու չնայած այս հարցում առաջընթացը դեռ մեծ չէ՝ պայմանավորված Եվրոպայում գազի հիմնական սպառող պետության՝ Գերմանիայի դիրքորոշմամբ, որը վախենում է, որ միասնական շուկան կհանգեցնի գազի գնի բարձրացմանը, այս քաղաքականությունը որոշակի հաջողությունների հասել է՝ ստիպելով Ռուսաստանին վերանայել գազի գինը Եվրամիության մի շարք պետությունների համար:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ գազի պահանջարկն աշխարհում շարունակաբար աճում է, հետևաբար՝ պայքարն այս շուկայում ազդեցություն ձեռք բերելու համար դեռ նոր է թափ հավաքում: Ռուսաստանը փորձում է այս պայքարում դաշնակիցներ ձեռք բերել՝ հանձինս գազով հարուստ Իրանի, Կատարի և այլ պետությունների, որոնք շահագրգռված են մեծացող այդ շուկայում իրենց դիրքերի ու ազդեցության պահպանմամբ: Այս պայքարում նրանց դիմակայում են առաջին հերթին ԱՄՆ-ը, Եվրամիության անդամ մի շարք պետություններ, Ճապոնիան և այլն:

Այս պայքարին դիմակայելու համար գազ արտահանող մի շարք պետություններ դեռ 2001թ. Իրանի մայրաքաղաք Թեհրանում ստեղծեցին Գազ արտահանող պետությունների ֆորում (*GECF- Gas Exporting Countries Forum*), որին անդամակցեցին Ալժիրը, Բոլիվիան, Եգիպտոսը, Իրանը, Կատարը, Տրինիդատ և Տաբագոն, Նիգերիան, Վենեսուելան, Լիբիան և Հասարակածային Գվինեան: Ռուսաստանն այս ֆորումին միացավ

միայն 2008թ., որից հետո այն որոշակի քաշ ձեռք բերեց գազի շուկայում: Այդ կառույցի կենտրոնականը Կատարի մայրաքաղաք Դոհայում է: 2014-ից այդ կառույցը ղեկավարում է Իրանի ներկայացուցիչը[4]:

Ինչևէ, կարող ենք պնդել, որ գազի շուկայի վերահսկողության համար էներգետիկ աշխարհաքաղաքական պայքարը նոր է ձևավորվում, և հիմնական հարցն այն է, թե արդյոք հնարավոր կլինի ձևավորել միասնական շուկա, և որ ամենակարևորն է՝ ո՞ր հարթակներում է որոշվելու գազի գինը: Վերջին 2-3 տարիներին Ռուսաստանը մեծ ջանքեր է ներդնում Սանկտ Պետերբուրգի հումքային բորսան վերածելու գազի առքուվաճառքի կարևորագույն կենտրոնի: Նույն աշխատանքն իրականացվում է նաև ԵԱՏՄ շրջանակներում՝ փորձելով ստեղծել գազի գնի ձևավորման մի նոր հարթակ, որտեղ էլ կորոշվի այդ հումքի գինը, և այն, հավանաբար, պարտադիր կլինի անդամ պետությունների համար: Այս ծրագրի նպատակն է՝ Ռուսաստանի կողմից վերահսկողություն սահմանել գազի գնի ձևավորման գործընթացի վրա՝ թույլ չտալով, որ նավթի օրինակով այն տեղափոխվի Լոնդոնի կամ Նյու Յորքի բորսաներ:

Եթե ռուսական ծրագիրը հաջողվի, ապա գազի վաճառքի Սանկտ Պետերբուրգի հարթակը միջպետական հարաբերությունների ձևավորման գործընթացին նոր որակ կհաղորդի, ինչը կազդի արդյունահանող և սպառող պետությունների վրա: Սակայն սանկտպետերբուրգյան ծրագրի իրականացման հաջողությունը կախված է այն հարցի պատասխանից, թե ինչ արժույթով է տեղի ունենալու գազի վաճառքի գործընթացն այդ հարթակում. եթե ամերիկյան դոլարով, ապա դրա հաջողությունը խիստ կասկածելի է, իսկ եթե ռուսներին հաջողվի այն իրականացնել ռուսական ռուբլով, ապա սա ավելի հեռանկարային է զուտ ռուսական շահերից ելնելով, սակայն այստեղ ևս հարցեր են առաջանում՝ պայմանավորված ռուսական արժույթի կայունությամբ ու նրա միջազգային գործածության ծավալներով և այլն:

Շարունակելի

[4] Տե՛ս Gas Exporting Countries Forum, https://www.gecf.org/

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գեորգի Կոլարով[*]

Մակեդոնիայի Հանրապետության խորհրդարանական ընտրությունների (2016թ. դեկտեմբերի 11) արդյունքները ցույց տվեցին, որ Մակեդոնական ներքին հեղափոխական կազմակերպություն-Մակեդոնական ազգային միաբանության դեմոկրատական կուսակցություն (ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ) դաշինքն ունեցել է ձայների 38%-ը, Մակեդոնիայի Սոցիալ-դեմոկրատական միությունը (ՄՍԴՄ)՝ 37%-ից պակաս: Նրանց հաջորդում են խորհրդարան անցած ալբանական չորս կուսակցություններ: Նոր խորհրդարանում ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ-ն ունի 51 պատգամավոր, ՄՍԴՄ-ն՝ 49, Ինտեգրման դեմոկրատական միությունը (ԻԴՄ)՝ 10, ալբանական նոր ԲԵՍԱ կուսակցությունը՝ 5, Ալբանացիների դաշինքը (ԱԴ)՝ 3, Ալբանացիների դեմոկրատական կուսակցությունը (ԱԴԿ)՝ 2:

2016թ. դեկտեմբերի 25-ին ՄՍԴՄ-ի օգտին Տեարցե գյուղաքաղաքում (որտեղ ընտրությունների ընթացքին հետևել է հոդվածագիրը) քվեարկել է 245 քաղաքացի, ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ-ի օգտին՝ 149, մեկական ձայն ստացել են ԻԴՄ-ն, ԱԴ-ն և ԱԴԿ-ն: Սա նշանակում է, որ ալբանացի բնակչությունը քվեարկել է սոցիալ-դեմոկրատների օգտին՝ հեշտացնելու համար պահպանողական նացիոնալ-հայրենասերների հաղթանակը, որոնց կապում են Բուլղարիայի հետ[1]: Ի դեպ, այնտեղ 2 քաղաքացի իրենց ձայնը տվել է բուլղարամետ ՄՆՀԿ-ի օգտին:

Ե՛վ ՄՆՀԿ-ականները, և՛ սոցիալ-դեմոկրատները (նախկին տիտոյականներ) իրենց հաղթող են հռչակել: Սա ՄՍԴՄ-ի հետընտրական էժան հնարքն է:

---

[*] Քաղաքական գիտությունների թեկնածու, Ժողովուրդների բարեկամության Ռուսաստանի ինստիտուտի դոկտորանտ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի (Երևան) և Տնտեսագիտական համալսարանի (Վառնա) դասախոս:

[1] www.dnevnik.mk/default.asp 25.12.2016. 23:12

Տեարցեում քվեարկությունից հետո սոցիալ-դեմոկրատների առաջնորդի՝ Զորան Զաևի կողմնակից Պետրե Շիլեգովը հայտարարեց, որ «ՄՍԴՄ-ն է կազմելու կառավարությունը»[2]: Եվ ընտրություններից անմիջապես հետո սկսվեցին բանակցությունները խորհրդարանում չորս ալբանական կուսակցությունների հետ:

Կենտրոնական Եվրոպայի երեք երկրների արտգործնախարարները, որոնք պատասխանատու էին խորհրդարանական ընտրությունների օրինական անցկացման համար, շնորհավորեցին իրենց գործընկեր Նիկոլայ Պոպովսկուն (ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ) ընտրություններում հաղթանակ տանելու առիթով և հաջողություններ մաղթեցին մակեդոնական պետության ամբողջականության պահպանմանն ու հետագա եվրաինտեգրմանն ուղղված գործունեությունում:

Ավստրիացի Սեբաստիան Կուրցը, հունգարացի Պետեր Սիյարտոն և սլովենացի Կառլ Երյավեցը համոզմունք հայտնեցին, որ ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ-ն պետք է կազմի Սկոպիեի նոր կառավարությունը: Սա տրամաբանական է՝ նկատի ունենալով ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ-ի և այն երկրների կառավարող կուսակցությունների գաղափարական պլատֆորմների մերձությունը, որոնք պահպանողականության, չափավոր նացիոնալիզմի կողմնակից են: Սա է ցանկանում բուլղարական ծագում ունեցող մակեդոնական քաղաքացիների մեծ մասը: Որովհետև ՄՆՀԿ-ն հաղթել է նախնառաջ այն շրջաններում, որոնցում բուլղարերենի մակեդոնական բարբառը մայրենի է տեղի գրեթե բոլոր բնակիչների համար: Իսկ ՄՍԴՄ-ն հաղթել է այնտեղ, որտեղ խառը կամ զուտ ալբանական (կամ թուրքական, գնչուական, կամ պոմակ, այսինքն՝ բուլղար մուսուլմաններ) բնակչությունն է գերակշռել:

Անկախ դիտորդների կարծիքով՝ ՄՍԴՄ-ն գնել է ալբանացիների ձայները (70-80 հազար): Սրանով է պայմանավորված Զորան Զաևի համոզվածությունը՝ իշխանությունից հեռացնելու ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ-ն:

Արդյո՞ք կիրականանան կենտրոնաեվրոպական նախարարների ցանկությունները երկրի ամբողջականության և եվրաինտեգրման առու-

[2] www.utrinski.mk/default.asp 25.12.2016. 22:08

մով: Քանի որ, ի հեճուկս արդեն տասներորդ ընտրական հաղթանակի, նախկին վարչապետ Նիկոլա Գրուևսկու կուսակցությունը հազիվ թե պահպանի այն բոլոր տարածքները, որոնք մտնում են Մակեդոնիայի Հանրապետության մեջ: Հակառակ այն բանի, որ երկրի ալբանական բնակչությունն արագ նվազում է Արևմուտք արտագաղթելու պատճառով, էթնիկ բուլղարները վաղուց հեռացել են երկրի հյուսիս-արևմուտքից և վերադառնալու մտադրություն չունեն: Ընդհանուր առմամբ, ալբանացիները հարևան բոլոր պետություններում բարձր ծնելիությամբ են աչքի ընկնում և Մակեդոնիայի հաջորդ փլուզման ժամանակ վերաբնակեցման «ցունամի» կառաջացնեն:

Ալբանական քվոտան խորհրդարանական ընտրություններում պարտություն կրեց, և դա ընդունեցին նաև ԻԴՄ և ԱԴԿ առաջնորդները (Ալի Ահմեթին և Մենդուհ Թաչին): Երկրորդն ընդունեց պարտությունը և հրաժարական է տվել՝ հայտարարելով, որ խորհրդարանի մյուս ալբանական կուսակցությունները կօգտվեն ԱԴԿ աջակցությունից: Իսկ առաջինն ասաց, որ իր կուսակցության հաղթանակը (երրորդ տեղ) իրեն չի ուրախացնում, որովհետև ալբանացի պատգամավորների թիվն այս խորհրդարանում քիչ է: Ալբանացիներն, ըստ էության, կազմում են երկրի բնակչության 25%-ը, որքան էլ որ նրանք ցանկանան մեծամասնություն լինել: Ալբանական չորս կուսակցությունների նախագահները համատեղ խորհրդակցություններ են անցկացրել ՄՆՀԿ-ՄԱՄԴԿ-ի և ՄՍԴՄ-ի հետ կոալիցիա ստեղծելու շուրջ՝ ներկայացնելով իրենց պահանջները. պետական կարգավիճակ տալ ալբաներենին, այն օգտագործել գործավարության մեջ, ուսուցանել բոլոր դպրոցներում:

Մյուս պահանջները սոցիալ-տնտեսական են (բյուջեի հավասար բաշխում և այլն): Շատ վերլուծաբանների կարծիքով՝ այս պահանջները կարագացնեն մակեդոնական պետականության փլուզումը: Մանավանդ որ դրանք ընդունվել են Տիրանայում, որտեղ չորս խորհրդարանական ալբանական կուսակցությունների առաջնորդները հանդիպել են Ալբանիայի վարչապետ Էդի Ռամայի հետ: Նա էլ հենց պարտադրել է նրանց միավորվել:

Մակեդոնիայի Հանրապետությունը ԵՄ թեկնածու միակ պետությունն է, որը դեմ է քվեարկել հակառուսական պատժամիջոցներին և վիզային ռեժիմ չի մտցրել Ռուսաստանի Դաշնության հետ: Եվ չի անի դա, քանի որ տուրիզմի զարգացման հեռանկարները հրապուրում են ոչ հարուստ ուղղափառ ռուսական ընտանիքներին, որոնց համար մեծ նշանակություն ունի այն, որ 1917թ. հետո բոլշևիկների կողմից վտարված շատ ռուս վանականներ ապաստան են գտել Մակեդոնիայի Հանրապետության ներկայիս տարածքում գտնվող վանքերում: Նրանց վանական կենտրոնը Լեշոկն է:

Ե՛վ այստեղ, և՛ այլ վանքերում նրանք ապրել և աշխատել են պատերազմից հետո: Ռուսաստանի դեսպան Օլեգ Շչերբակը կարծում է, որ «Մակեդոնիան «մեր բնակության ծիրն» է, բնական միջավայր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության աճի և բազմապատկման համար»[3]: «Մակեդոնացիների համար գաղտնիք չէ, որ ԵՄ մտնելը ստանդարտ պայմաններով կհանգեցնի տեղի գյուղատնտեսության վերացմանը, քանի որ այն չի դիմանա այնպիսի հսկաների հետ մրցակցությանը, ինչպիսին են Իտալիան, Ֆրանսիան, Գերմանիան: Դա արդեն տեղի է ունեցել հարևան Բուլղարիայում, որտեղ շուկան լցված է թուրքական և ԵՄ ապրանքներով»[4],- ասել է նա: Նրա գործընկերը՝ Մոսկվայում Մակեդոնիայի Հանրապետության դեսպան Գոցե Կարայանովը, նշում է. «Մեզ ուրախացնում է, որ մշտապես աճում է ապրանքաշրջանառությունը, բացվում են նոր ուղղություններ առևտրի մեջ: Անցած տարի Մակեդոնիան հնարավորություն ստացավ Ռուսաստան արտահանել կաթ և կաթնամթերք: Համագործակցության երկու տարում մեծ առաջընթաց է տեղի ունեցել. եթե մինչ այդ արտահանումը Ռուսաստան կազմում էր 8-10 մլն եվրո, ապա այժմ մենք կարող ենք խոսել 50-60 մլն-ի մասին, իսկ առաջիկայում նախատեսում ենք այն հասցնել մինչև 100 մլն եվրոյի, ինչը մեր փոքր երկրի համար էական թիվ է»[5]: Մնում է ավելացնել, որ Մոսկվայի սերբական ռեստորաններում առաջարկում են մակեդոնական Կա-

[3] MJ#03/2016, Москва, с. 65.
[4] Նույն տեղում, с. 66.
[5] Նույն տեղում, с. 86.

վադարցի քաղաքում արտադրված գինի: Այն Մոսկվա են հասցնում բուլղարական բեռնատարները:

Ռուսական «Սինթեզ գրուփ» շինարարական կոնցեռնը նորոգել է 2009թ. կառուցված մի էլեկտրական Վոդնո լեռան վրա, որը Օ.Շչերբակն անվանում է Սկոպիեի այցեքարտ[6]: Պետք է նշել, որ «Սինթեզ գրուփը» Սկոպիեի մոտ կառուցել է նաև հզոր գազատուրբինային կայան, որը լիովին բավարարում է Մակեդոնիայի մայրաքաղաքի էլեկտրաէներգիայի և ջեռուցման պահանջարկը: Այն աստիճանաբար անցում է կատարում ռուսական գազին: Նիկոլա Գրուևսկու վարչապետության օրոք ռուսական ընկերություններն այստեղ աշխատում են ամբողջ թափով: Պատահական չէ, որ նա սկզբում ցանկություն էր հայտնել իր երկրում տեսնել «Թուրքական հոսքը», թեև հետագայում հրաժարվեց այդ մտքից Վաշինգտոնի և Բրյուսելի ճնշման ներքո:

2017թ. փետրվարի 7-ին տեղի ունեցավ մի իրադարձություն, որը ցնցեց Բալկանյան թերակղզու բոլոր երկրների քաղաքական կյանքը. ամերիկացի կոնգրեսական Դեյնա Ռորաբեքերը ալբանական «Վիզիոն+» հեռուստաալիքին տված հարցազրույցում առաջին հայացքից սկանդալային հայտարարություններ արեց, որոնք, սակայն, նախ, ճշմարտացի փաստարկներ և կանխատեսումներ են պարունակում, երկրորդ՝ արտացոլում են Վաշինգտոնի նոր՝ հանրապետական վարչակազմի իրական տեսակետը: Նա ասել էր, թե «Մակեդոնիան պետություն չէ: Ցավում եմ, բայց դա պետություն չէ: Մարդիկ այնտեղ այնպես մասնատված են, որ երբեք միասին ընթանալ չեն կարող: Այնպես որ, կոսովցիները և ալբանացիները պետք է դառնան Կոսովոյի մասը, մնացածը պետք է դառնան Բուլղարիայի մասը, այն երկրի, որի հետ մարդիկ իրենց կապված են համարում»[7]:

Նա նաև այն կարծիքին է, որ գաղափարը, թե «Մակեդոնիան կպահպանվի, որովհետև 30 տարի առաջ ինչ-որ մեկն այնպես է որոշել, թե դա կլինի այն կոնֆիգուրացիան, որը պետք է գոյանա Հարավսլավիայի փլուզումից հետո, բանական բացատրություն չունի, թե ինչու պետք է այդպես լինի»[8]:

[6] Նույն տեղում, с. 66.

[7] www.vmro.bg/американски-конгресмен-предлага-разделяне-на-македония-между-българия-и-албания/07.02.2017.

[8] Նույն տեղում:

Դեյնա Ռորեբեքերն ասել է, որ աշխարհի այս հատվածը՝ Բալկանները, մտնում է վերլուծությունների և կանխատեսումների իր իրավասությունների մեջ և հավաստիացրել է, որ առաջիկա ամիսներին նախաձեռնելու է Բալկաններում սահմանների վերաձևման քննարկումներ, որոնք պետք է խաղաղություն բերեն «վառոդի տակառի» վրա նստած երկրներին ողջ Եվրոպայի համար»[9]:

Նա նաև ալբանացի լրագրողներին հայտնել է, որ «ՆԱՏՕ-ն սպառել է իրեն, ժամանակն է ձևավորել նոր դաշինքներ: Այսօր Ռուսաստանը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում ավելին է անում, քան մեր դաշնակիցները Եվրոպայում՝ օգնելու համար ԱՄՆ-ին ոչնչացնել արմատական իսլամիզմը: Թուրքիան ՆԱՏՕ-ում տեղ չունի: Եթե Թուրքիայի նախագահ Էրդողանը կարծում է, թե կարող է մշտապես քննադատել Արևմուտքին՝ ոչնչով չօգնելով իսլամական ահաբեկիչների դեմ պայքարում, այդ ժամանակ Թուրքիան հանգիստ կարող է դուրս գալ ՆԱՏՕ-ից»[10]:

Դեյնա Ռորեբեքերն իսկական խուճապ առաջացրեց Սկոպիեում, առաջ բերեց Սոֆիայի բուռն և Տիրանայի ու Պրիշտինայի զուսպ արձագանքը: Մակեդոնական գլխավոր քաղաքական ուժերը՝ ՄՆՀԿ-ն և ՄՍԴՄ-ն, հանդիպումներ ունեցան օտարերկրյա այն դեսպանների հետ, որոնք ներկայացնում են ԱՄՆ-ին հակակշիռ պետությունները մակեդոնական տարածքում արտաքին ուժերի դիմակայությունում: Նիկոլա Գրուևսկին խոսել է Թուրքիայի դեսպան Էրքալ Քարայի հետ, իսկ Զորան Զաևը հանդիպել է Օլեգ Շչերբակի հետ: Ամերիկացի կոնգրեսականի կանխատեսումները կարող են իրականանալ արդեն առաջիկայում: Ռուսաստանի դերը մակեդոնական ճգնաժամի լուծման գործում կարող է առանցքային լինել[11]:

Սոֆիայում բոլոր լրատվամիջոցները հրապարակել են ամերիկացի կոնգրեսականի հարցազրույցին նվիրված վերլուծություններ: Ընդհանուր կարծիք է հայտնել մակեդոնական հարցի հայտնի գիտակ, սփյուռքի նախկին նախարար, Ազգային պատմական թանգարանի տնօրեն, պրոֆեսոր, պատմագիտության դոկտոր Բոժիդար Դիմիտրովը: Նա հույս է

[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում:
[11] www.news.bg/columnists/rorabeykar-si-igrae-s-oganya-koy-shte-go-gasi-posle.html

հայտնել, որ Մակեդոնիայի Հանրապետությունը կպահպանի իր սահմանները ներկայիս տարածքում, բայց կթեքվի դեպի իր բուլղարական «բնույթը»՝ վերածվելով երկրորդ բուլղարական պետության: Միևնույն ժամանակ, նա հասկանալ է տվել, որ ըմբռնումով է վերաբերվում ամերիկյան կոնգրեսականի կանխատեսմանը, որը չի կարող ողջունել արհեստածին այդ կազմավորումը, որը ստեղծվել է «20-րդ դարի 30-ականների Կոմինտերնի բալկանյան քարտուղարության կողմից»[12]:

Տիրանայում և Պրիշտինայում տեղական լրատվամիջոցների արձագանքը լուրջ էր: Իսկ քաղաքական գործիչները և դիվանագետները ձևացնում են, թե ոչինչ չի պատահել. բոլորին էլ պարզ է, որ վաղ թե ուշ Մակեդոնիայի Հանրապետության հյուսիսարևմտյան մասը հայտնվելու է իրենց ձեռքում: Ուստի, նախընտրում են չաղմկել:

Պետք է նկատի ունենալ, որ Դեյնա Ռորեբեքերը հավակնում էր պետքարտուղարի պաշտոնին: Ռեքս Թիլերսոնի ընտրությունը բացատրվում է նրանով, որ Դոնալդ Թրամփի համար շատ ավելի կարևոր են հարաբերությունները Ռուսաստանի հետ, քան թե Բալկաններում հերթական արյունահեղությունը կանխելը: Սակայն դա չի նշանակում, թե չի լսում կալիֆորնիացի կոնգրեսականի կարծիքը և հաշվի չի առնում նրա տեսակետները: Ըստ երևույթին, Սպիտակ տունն առաջիկայում կկողմնորոշվի բալկանյան քաղաքականության հարցում: Առայժմ ակնհայտ է մի բան. Մակեդոնիայի բուլղարական և ալբանական համայնքներն ամեն օր ապացուցում են, որ չեն կարող ապրել ընդհանուր պետությունում: Երկրի բաժանումն անխուսափելի է[13]:

Քանի որ ընտրություններում հաղթանակած ՄՆՀԿ-ՄԱՀԴԿ-ն չկարողացավ կառավարություն կազմել, դրան ձեռնամուխ եղավ ՄՄԴՄ-ն: Դրա առաջնորդ Զորան Զաևն ունի ԻԴՄ աջակցությունը և կարողացավ մանդատ պահանջել: Նախագահը՝ ՄՆՀԿ-ՄԱՀԴԿ-ական Գեորգի Իվանովը, մերժում է նրան՝ փաստարկելով, որ դա թույլ չի տալիս Սահմանադրությունը: «...Ես չեմ կարող մանդատ տալ նրան, ով սպառնում է Մակե-

[12] www.news.bg/your-voice/no-zashto-da-ya-delim-tazi-pusta-makedoniya-pita-bozhidar-dimitrov.html

[13] www.eadaily.com/ru/news/2017/02/10/bolgaria-i-kosovo-razdelyat-makedoniyu-kontury-novoy-balkanskoy-politiki-ssha

դոնիայի ինքնիշխանությանը... Ալբաներենը կդառնա պաշտոնական և կսկսվի միասնական պետության փլուզումը... 2016թ. դեկտեմբերի 11-ի ընտրություններից հետո օտար պետությունը և նրա վարչապետն ուղղակիորեն միջամտում են երկրի ներքին գործերին: Արտասահմանում կազմվել է այսպես կոչված «ալբանական պլատֆորմ»: Դա նշանակում է Մակեդոնիան պատանդ դարձնել օտար պետության ձեռքում: Ես հույս ունեմ, որ մակեդոնական քաղաքական կուսակցությունները միասին կքննարկեն նման վարքագիծը»[14]:

Զ.Զաևը հրապարակավ մեղադրեց Գ.Իվանովին պետական հեղաշրջում իրականացնելու մեջ: ԵՄ առաջատար երկրների դեսպանները պահանջեցին նախագահից վերանայել իր որոշումը: Նա, սակայն, ունի Սոֆիայի ՄՆՀԿ առաջնորդ, նոր փոխվարչապետ և Բուլղարիայի Հանրապետության պաշտպանության նախարար Կրասիմիր Կարակաչանովի աջակցությունը[15]: «Մենք ցանկանում ենք, որպեսզի մեր հայրենակիցները Մակեդոնիայի Հանրապետությունում, որոնցից շատերը Բուլղարիայի քաղաքացիներ են, ապրեն խաղաղ և վստահ իրենց երեխաների ապագայի համար: Թույլ չենք տա, որ որևէ մեկը նրանց ենթարկի ագրեսիայի և վտանգի ու միշտ պատրաստ ենք պաշտպանել նրանց»,- ասել է նա[16]:

Նրան իր պաշտպանությունն է հայտնել քաղաքագետ Դիմիտր Գանևը. «Բուլղարական իշխանությունները պետք է հստակ դիրքորոշում հայտնեն հարևան Մակեդոնիայի ճգնաժամի հետ կապված... Շատ ծանր ճգնաժամ, երբ կարող է հարցականի տակ դրվել այդ պետության ամբողջականությունը»[17]:

Այս դժվարին իրադրությունում Սկոպիե այցելեց Ֆեդերիկա Մոգերինին (Բելգրադից հետո): Նա հանդիպել է ՄՆՀԿ-ՄԱՀԴԿ ղեկավարների հետ, որոնք դժգոհություն են հայտնել Ալբանիայի վարչապետ Էդի Ռա-

[14] www.standartnews.com/svyat-europe/george-ivanov-otkaza-da-vrachi-mandat-na-opozitsiyata-350431.html

[15] www.news.bg/politics/vmro-zove-makedoniya-da-ne-dopuska-albanskiya-kato-vtori-oficialen-ezik.html

[16] Նույն տեղում:

[17] www.news.bg/politics/vlastite-ni-da-izlyazat-s-yasna-pozitsiya-po-makedoniya-prizova-politologat-dimitar-ganev.html

մայի ճնշման տակ ընդունված պլատֆորմից, «որը բացասական հետևանքների կհանգեցնի հարևան պետության ներքին գործերին կոշտ միջամտության պատճառով»[18]:

Ֆ.Մոգերինիի հետ զրույցի ժամանակ ՄՆՀԿ ղեկավարները հաստատել են իրենց դիրքորոշումը. «կայունության և քաղաքական ճգնաժամը հաղթահարելու լավագույն միջոցը արագ ընտրություններն են»[19]:

Հասկանալով, որ այս ամենը կարող է սրել հակաալբանական տրամադրություններ, հաջորդ օրը ԻԴՄ ղեկավարությունը խորհրդակցություն է հրավիրել և որոշել, որ լինելու է նոր կառավարության մաս՝ մեծամասնություն կազմելով: Ուստի պահանջում են, որպեսզի նախագահ Գ.Իվանովը մանդատ տա Զ.Զանին[20]:

2017թ. ապրիլի 3-ին Սկոպիե ժամանեց նաև Դոնալդ Տուսկը: Նա հանդիպում ունեցավ նախագահ Գ.Իվանովի հետ՝ փորձելով փոխզիջումային տարբերակ գտնել: Դրանից հետո նա մեկնեց Սոֆիա՝ ստանալու համար Բուլղարիայի նախագահի և կառավարության աջակցությունը:

Բուլղարացի հայտնի դիվանագետ, հետախույզ Վելիզար Ենչևը հետաքրքիր եզրակացություն է արել. «1944թ. սեպտեմբերից հետո մարշալ Տիտոյի դրածո մակեդոնական ղեկավարները երկու զուգահեռ քաղաքական գիծ են անցկացնում Վարդարյան Մակեդոնիայում՝ նշանավոր բուլղարացիների ֆիզիկական բնաջնջում և մակեդոնական ազգի ու լեզվի վարչական պարտադրում: Դա արվում էր Պետական անվտանգության վարչության և Հարավսլավիայի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղափարախոսական հանձնաժողովի ցուցումով. այստեղ վճռական խոսքը պատկանում է բացառապես սերբ ազգային կադրերին:

Նոր ազգը սեփական քաղաքակրթական ռեսուրս չունի, ուստի կառուցվում է ուրիշի պատմական նվաճումների վրա: Իսկ նոր լեզուն (բուլղարերենի հարավարևմտյան բարբառը) ենթարկվում է սերբացման... Աշխարհագրական պատկանելությունը (մակեդոնացի) արհեստականորեն հակադրվում է սլավոնների բուլղարական ազգային պատկանելությանը Վարդարյան Մակեդոնիայում»[21]:

[18] www.dnevnik.mk/default.asp 02.03.2017 18:00
[19] Նույն տեղում:
[20] www.utrinski.mk/default.asp 04.03.2017 01:15
[21] *Велизар Енчев,* Аз бях в разузнаването. София, 2014, «Изток-Запад», с. 289.

Ապրիլի 1-ին Բոժիդար Դիմիտրովը կատակել էր, թե առաջարկություն է ստացել գլխավորել մակեդոնական կառավարությունը և համաձայնել է՝ պայմանով, որ ընդունվի մակեդոնական պետության բուլղարական բնույթը: Այն իմաստով, որ Մակեդոնիայի Հանրապետությունը պաշտոնապես դառնա բուլղարական երկրորդ պետությունը: Կատակը շատ հաջող ստացվեց, Սոֆիայում և Սկոպիեում բավական ծիծաղեցին, բայց դա վերջին ուրախ օրն էր երկար ժամանակի համար:

Հետո արդեն կատակելու ժամանակը չէր. ապրիլի 27-ին բուլղարական ծագման մակեդոնացիները գրոհեցին խորհրդարանը և ծեծեցին սոցիալ-դեմոկրատների առաջնորդներին այն բանի համար, որ նրանք պատրաստակամություն էին հայտնել կառավարություն կազմել ալբանական չորս կուսակցությունների հետ: Պահանջվում էր ներքին գործերի նախարար Ագիմ Նուխիուի հրաժարականը: Բախումների կոնկրետ առիթ էր հանդիսացել խորհրդարանի նախագահի ընտրությունը (էթնիկ ալբանացի Թալաթ Ջաֆերի): Նրա ընտրությունը խորհրդարանի նախագահի պաշտոնում կատարվել էր կանոնադրության խախտմամբ:

Այս ամենին գումարվում էր նաև այն, որ պահանջվում էր ալբաներենը բարձրացնել պաշտոնական լեզվի մակարդակի, փոխել ազգային խորհրդանշանները՝ դրոշ, օրհներգ և այլն, բացի այդ, պահանջվում էր, որպեսզի ալբանական կուսակցությունները մասնակցեն Հունաստանի հետ հանրապետության անվան վերաբերյալ վարվող միջպետական բանակցություններին: Հույները «Մակեդոնիա» անունը համարում են իրենց պատմական ժառանգությունը և արգելափակում են Մակեդոնիայի մուտքը եվրոպական և համաշխարհային կազմակերպություններ:

Այդ օրերի իրադարձությունները ցույց տվեցին, որ մակեդոնական բուլղարները լիովին չեն կորցրել ինքնապահպանման բնազդը և 2001թ. գարնան պատերազմը նրանց շատ բան է սովորեցրել: Եվ հիմա նրանք պատրաստ են պաշտպանել իրենց պետության մնացորդները երկրի հյուսիս-արևմուտքում նոր հողեր կորցնելու վտանգի առջև: Այնտեղ արդեն, առնվազն, երեք պատմական բուլղարական քաղաքներում՝ Տետովոյում, Դեբրում, Գոստիվարում, միայն ալբանացիներ են ապրում: Էթնիկ բուլղարները 20-րդ դ. մեկնել են ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա: Հարցականի տակ է

նաև երկու այլ քաղաքների՝ բուլղարական պատմության մեջ հատուկ տեղ ունեցող Ստրուգայի և Կիչևոյի պետական պատկանելության հարցը:

ՄՆՀԿ ղեկավարները և շարքային ընդվզողները զայրացած են այն փաստից, որ ալբանական չորս կուսակցությունների առաջնորդները խորհրդարանական ընտրություններից առաջ եղել են Տիրանայում, որտեղ Էդի Ռաման թելադրել է նրանց «Տիրանայի պլատֆորմը», որը միավորում է նրանց Սկոպիեի մյուս քաղաքական ուժերի դեմ: Դա չեն նկատում, սակայն, ԵՄ, ԱՄՆ, Կանադայի դեսպաններն ու տեղի և օտարերկրյա լրատվամիջոցները, որոնք ֆինանսավորվում են Ջորջ Սորոսի «Բաց հասարակություն» հիմնադրամի կողմից: ԵՄ երկրներից միայն Հունգարիան և Հունաստանն են պաշտպանել Գրուևսկուն Սորոսի և նրա հիմնադրամի դեմ պայքարում: Տիրանայի և Պրիշտինայի տարածքային և աշխարհաքաղաքական նկրտումների հանդեպ համակրանքի մեծացումը Արևմտյան Եվրոպայում մտահոգիչ է: Դրան զուգահեռ, մեծանում են ալբանական մաֆիայի հնարավորությունները Գերմանիայում, Շվեյցարիայում և այլուր: Արևմտյան հատուկ ծառայությունների տվյալներով՝ ալբանացիներն ունեն զենքի և թմրանյութերի թրաֆիկ, վարձու մարդասպաններ և այլն: Գաղտնիք չէ նաև, որ Սիցիլիայի մաֆիայում նույնպես էթնիկ ալբանացիներ կան:

Ի տարբերություն չորս ալբանական կուսակցությունների միասնականության, ՄՆՀԿ և ՄՍԴՄ առաջնորդները միմյանց մեղադրում են հնարավոր բոլոր մեղքերի մեջ: Գրուևսկուն անվանում են Մոսկվայի գործակալ, միայն այն բանի համար, որ համաձայնել է կառուցել «Թուրքական հոսքը» մակեդոնական տարածքում և թույլ է տվել ներդրումներ անել «Ինեժվեստ Գրուփ» հոլդինգին: Իսկ Զորան Զաևին մեղադրում են Արևմուտքին ծառայելու մեջ. նա, ինչպես և նախկին նախագահ Բորիս Տրայկովսկին, Ստրումիցա քաղաքից է՝ Բուլղարիայի հետ սահմանին: Ժամանակին տեղի բուլղարները զանգվածաբար բողոքականություն ընդունեցին, որպեսզի դիմակայեն հելլենացման փորձերին: Ե՛վ նրանք, և՛ նրանց սերունդները իրենց հայացքն ուղղել են անգլոսաքսոնական երկրներին: Թե՛ Զ.Զաևը, թե՛ այժմ հանգուցյալ Բ.Տրայկովսկին դաստիարակվել են Վաշինգտոնին և Բրյուսելին հավատարիմ ծառայելու ոգով:

Մակեդոնական բուլղարների համակրանքը Ռուսաստանի հանդեպ խիստ անհանգստացնում է ամերիկյան և բրիտանական հատուկ ծառայություններին։ Եվ նրանք հակամիջոցներ են ձեռնարկում. լոնդոնյան «Սանդի Թայմս» թերթում (2017թ. մայիսի 2 և 7) Բոյան Պանչևսկի ստորագրությամբ հոդվածներ են լույս տեսել՝ նվիրված Մակեդոնիայում Կրեմլի գործունեությանը։ Աչքի է զարնում վերնագիրը. «Ենթարկվիր Ռուսաստանին կամ տառապիր»։ Հոդվածը գրված է այն ոգով, թե, իբր, Ռուսաստանն ագրեսիայով և ուժով ջանում է հաստատվել ամբողջ Բալկաններում, այդ թվում և փոքրիկ Մակեդոնիայում, և ամեն բան անում է ջուրը պղտորելու համար, որպեսզի «պղտոր ջրում ձուկ որսա»։ Ռուսաստանի ԱԳՆ և Սկոպիեում ՌԴ դեսպանության արձագանքը միանշանակ էր. Մակեդոնիայում լարվածության միակ մեղավորը Արևմուտքն է, որտեղից էլ մշտապես մեղքը հիվանդ գլխից առողջի վրա են բարդում։ Դժվար չէ գտնել այնպիսի հեղինակների, ինչպիսին Բոյան Պանչևսկին է, որոնք պատրաստ են դիմակայել բուլղարա-ռուսական բարեկամությանն ու եղբայրությանը։ Մակեդոնիայում դա շատ ավելի հեշտ է. մակեդոնական բուլղարներն իրենց ազատությունը չեն ստացել 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում և նրանց համար Սան Ստեֆանոյի 1987թ. մարտի 3-ի պայմանագիրը հազիվ թե շատ բան նշանակի։ Մակեդոնական բուլղարները թուրքերից ազատագրվել են միայն 1912թ. և անմիջապես ընկել սերբական ու հունական ստրկության տակ (ոչ առանց Նիկոլայ Երկրորդի մասնակցության)։ Ուստի, հեշտ է վիրավորվել, երբ խեղաթյուրում են նրանց պատմությունն ու ներկան։

Արդեն քառորդ դար նրանց միակ ելքը մնում է բուլղարական քաղաքացիություն ստանալը. մոտ 1.250.000 էթնիկ բուլղարներից Մակեդոնիայում 250.000-ը կամ արդեն ձեռք է բերել բուլղարական անձնագրեր, կամ պատրաստվում է անել դա։ Այսինքն՝ այնտեղ չկա ընտանիք՝ առանց Մայր Հայրենիքի քաղաքացու։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

*Արտյոմ Տեր-Հարությունյան**

Ահաբեկչությունը սոցիալ-քաղաքական և քրեական բարդ և բազմակողմ երևույթ է, որի դեմ անհնար է պայքարել առանց նրա բնույթը, էությունը, նպատակները, շարժիչ և ծնող ուժերը լավ ուսումնասիրելու:

ՀՀ ահաբեկչական դրսևորումների արմատները մեծ մասամբ գալիս են մեր երկրի տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքում այսօր ընթացող հակասական և հիվանդագին գործընթացներից, այն է՝ սեփականության վերաբաշխում, բնակչության մեծամասնության կենսամակարդակի անկում, տնտեսության ապաարդյունաբերացում, հասարակության մարգինալ շերտերի ընդլայնում, պետական ապարատի կոռումպացվածության բարձր մակարդակ, քաղաքացիների սոցիալական երաշխիքների բացակայություն, ծայրահեղ ժողովրդագրական իրավիճակ, արտագաղթի հոսքերի մեծացում, հոգևոր ոլորտի քայքայում, քաղաքական հակասությունների լուծման համար բռնի մեթոդների օգտագործում, հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության անկում:

Երկրում ստեղծված այսպիսի բարդ իրավիճակում ահաբեկչության դեմ պայքարում հաջողության կարելի է հասնել միայն վճռական և անհետաձգելի միջոցներով: Ահաբեկչական վտանգին հակազդելու համար անհրաժեշտ է ստեղծել միասնական հակաահաբեկչական հայեցակարգ, ինչպես նաև բոլոր կատարող ուժերի, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների փոխգործակցություն, ընդ որում՝ պետք է հստակեցնել այս գործունեությունը համակարգողին: Անհրաժեշտ է հաստատել և խորացնել կապերն արտերկրի շահագրգիռ հատուկ ծառայությունների և

* Անվտանգության գծով փորձագետ:

իրավապահ մարմինների հետ, ԱՊՀ և ՀԱՊԿ անդամ երկրների հետ ստեղծել տվյալների միասնական բանկ քաղաքական ահաբեկչության և ծայրահեղականության պայքարի ոլորտում:

Ահաբեկչությանը հակազդելու արդյունավետ միջոցների մշակման տեսանկյունից օգտակար է բուն երևույթի վերլուծությունը, նրա բնույթի, հիմնական բաղադրիչների և նախանշանների հստակեցումը: Կարելի է նշել, որ ահաբեկչության որոշիչ տարր է քաղաքականապես մոտիվացված բնակչությունը: Արմատական մեթոդների և միջոցների օգնությամբ ահաբեկիչները ձգտում են ղեկավար ազդեցություն ունենալ իշխանության վրա, իսկ հանցավոր նպատակների իրագործման համար առավելագույնս օգտագործել խաղաղ բնակչության չպաշտպանվածությունն ու խոցելիությունը:

Անհրաժեշտ է տարբերակել անհատական և խմբակային ահաբեկչության բնույթը: Եթե անհատների ահաբեկչությունն ավելի հաճախ բացատրվում է անձի անհատական պաթոլոգիական շեղումներով, հասարակության և պետության որդեգրած արժեքների և տվյալ անձի շահերի չհամընկնմամբ, ապա խմբակային ահաբեկչությունը ենթադրում է, մի կողմից, պետության ու հասարակության, մյուս կողմից՝ ահաբեկիչների միջև կոնֆլիկտի լուրջ գաղափարա-քաղաքական հիմքերի առկայություն: Վերջին հանգամանքը հանգեցնում է երկու կարևոր եզրահանգումների. նախ՝ խմբակային ահաբեկչության գնահատման պարագայում անհնար է խուսափել երկակի ստանդարտներից, որի արդյունքում, օգտագործելով զանազան հիմնավորումներ, նույն հաջողությամբ կարելի է և՛ դատապարտել, և՛ արդարացնել ահաբեկիչների գործողությունները: Երկրորդ՝ ահաբեկչության գաղափարաքաղաքական հիմքի գոյությունն անհրաժեշտ է հաշվի առնել պայքարի առավել արդյունավետ միջոցների մշակման ընթացքում: Այսպես, հաճախ ահաբեկչական գործողությունների կողմնակիցներն ու հրահրողներն արդարության և լեգիտիմության տեսանելիություն ստեղծելու համար դիմում են ազգայնական գաղափարախոսությանը և կրոնական դոգմաներին: Արդյունքում՝ տեղի է ունենում հետաքրքիր կերպարանափոխություն՝ արտաքնապես գրավիչ կարգախոսներն ու համոզմունքները, որոնց հիմքում իբր հոգատարությունն է մարդկանց հանդեպ, նրանց կենսապայմանների բարելավումը կամ շա-

հերի պաշտպանությունը, ի վերջո վերաճում են բռնի գործողություններ-ի, որոնք կործանարար հետևանքներ են ունենում այդ նույն մարդկանց համար: Այս ամենն անհրաժեշտ է հաշվի առնել հակաահաբեկչական պայքարում՝ բնակչության թիրախային շերտերում իրականացնելով համապատասխան բացատրական աշխատանք:

Ահաբեկչության սոցիալական և քաղաքական արմատների հանգամանալից վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա զարգացման համար պարարտ հող են ցածր կենսամակարդակը, կարիքը, սոցիալական անարդարությունը, քաղաքական անկայունությունը: Մեր կարծիքով՝ ահաբեկչության հակված ընդդիմադիր ուժերի հետ պետք է գտնվել մշտական երկխոսության մեջ: Ահաբեկիչներին չի կարելի առանձին թողնել իրենց գաղափարախոսության հետ, անհրաժեշտ է ձգտել լինել նրանց կողքին, շեղել արմատական գործողություններից, իրականացնել նրանց ահաբեկչական աշխարհայացքի թերապիա:

Ներկայում կարելի է ձևակերպել ժամանակակից ահաբեկչության հետևյալ առանձնահատկություններն ու նախանշանները. պետական կառույցների անբավարար վերահսկողություն, որն այն դարձնում է առավել վտանգավոր և անկանխատեսելի, հիբրիդային բնույթ, որը ենթադրում է հանցավոր նպատակների և ահաբեկչական գաղափարախոսության զուգակցում, արագ փոխակերպում առաջացնող միջոցների տարածում և հասանելիություն, աշխարհագրության և մասշտաբների մեծացում, ինչպես նաև հզոր ֆինանսավորման և տեղեկատվական բազայի վրա հենվող հարձակողականություն:

Կարծում ենք՝ քաղաքական արմատականության և ահաբեկչության դեմ պայքարի կազմակերպման մոտեցումները պետք է լինեն հավասարակշռված և հետևողական: Անթույլատրելի է քաղաքական ծայրահեղականության դրսևորումների հանդեպ չափազանցված հակազդումը: Անհրաժեշտ է հանգամանորեն բացահայտել տարաբնույթ ծայրահեղական հոսանքների ծագման և զարգացման արմատները, որպեսզի առավել արդյունավետ կասեցվի նրանց վտանգավոր ակտիվությունը և տեղափակվի նրանց հնարավոր վերաճումը հակասահմանադրական և հակաիրավական ձևերի:

Բացահայտելով կոնկրետ ահաբեկչական երևույթների բնույթը և ծագումը՝ անհրաժեշտ է ստեղծել հակազդման մեխանիզմներ: Այս գործում իրենց դերը պետք է ունենան գործադիր իշխանության մարմինները, հասարակական ինստիտուտները, օրենսդիրը և, անշուշտ, հատուկ ծառայություններն ու իրավապահ մարմինները:

Որոշ մասնագետներ առաջարկում են ահաբեկչությանն արդյունավետ հակազդելու նպատակով քրեական օրենսդրությունում լայնացնել ահաբեկչությանը վերաբերող հանցագործությունների շրջանակը: Մեր կարծիքով՝ նման մոտեցման արդյունավետությունը փոքր է: Անհրաժեշտ է իրականացնել նախազգուշական և կանխարգելիչ միջոցներ, այսինքն՝ քաղաքական ծայրահեղականության և ահաբեկչության հակազդման ոլորտում ակտիվացնել հատուկ պրոֆիլակտիկ գործունեությունը:

Կանխարգելիչ գործողությունները ենթադրում են այնպիսի միջոցների կիրառում, որոնք կբացահայտեն կամ կնվազեցնեն ծայրահեղականության համար պարարտ հող հանդիսացող սոցիալ-քաղաքական կոնֆլիկտի հնարավոր ծագումը: Այդ նպատակով տեղին է երիտասարդության համար թեմատիկ երեկոների կազմակերպումը՝ նվիրված թմրամոլության դեմ պայքարին, բնակչության մշակութային և իրավական գիտելիքների մակարդակի բարձրացմանը, բռնության գաղափարների անընդունելիության ներարկմանը: Անհրաժեշտ է ի հայտ բերել բնակչության սոցիալապես ակտիվ և անապահով շերտերն ու խմբերը, որոնք քրեագետների տեսանկյունից առանձնանում են հանցածին վարքով: Հենց այս սոցիալական միջավայրում տեղական իշխանությունները պետք է կենտրոնացնեն իրենց ջանքերը՝ բարելավելու կենսապայմանները, լուծելու զբաղվածության և ժամանցի խնդիրները:

Ահաբեկչության դեմ պայքարի մոդելների կառուցումը ենթադրում է համալիր լայնամասշտաբ միջոցառումների ժամանակին պլանավորում և իրագործում, որոնց անհրաժեշտությունն առաջանում է իրավիճակի սրացման դեպքում: Դրանց թվին են պատկանում կոլեկտիվներում և սոցիալական պայթյունավտանգ միջավայրերում բացատրական աշխատանքի անցկացումը, ահաբեկչական գործողությունների փաստով դատական գործընթացների հնարավորինս կրճատման և դրանց արդ-

յունքների մասին հասարակության իրազեկման նպատակով արդարադատության մարմինների հետ սերտ համագործակցությունը, ծայրահեղականության դրսևորման վտանգավոր կետերում ոստիկանական ուժերի կենտրոնացումը, կոնկրետ փաստերով իրավիճակի սրման թեմայով բոլոր շահագրգիռ քաղաքական և հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ աշխատանքային նիստերի անցկացումը, տեխնիկական միջոցներով իրավիճակի վերահսկումը, և վերջապես, օրենսդրությամբ նախատեսված հասարակության հետ ներքին աշխատանքը:

Ահաբեկչության դեմ պայքարում առանձնահատուկ դերակատարում ունեն զանգվածային լրատվամիջոցները և սոցիալական ցանցերը: Հնարավորություն ունենալով ազդել միլիոնավոր մարդկանց աշխարհայացքի ձևավորման վրա՝ նրանք կարող են ինչպես սրել հասարակության հակամարտությունն ահաբեկչության հետ, այնպես էլ խոչընդոտել դրան: Հրապարակային ահաբեկչական գործողությունների կազմակերպիչներն ու հրահրողներն ակնկալում են բուն գործողությունների չափերն ու արդյունքները գերազանցող հասարակական արձագանք: Այս իրավիճակում ահաբեկչական գործողությունների հասարակական գնահատականը մեծապես կախված է զանգվածային լրատվամիջոցներից:

Քաղաքական ծայրահեղականությանը և նրա առավել վտանգավոր ձևերին՝ ահաբեկչական երևույթներին արդյունավետ հակազդումը համաշխարհային հանրության և առանձին երկրների համար լուրջ հիմնախնդիր է և արդիական ներկա իրականության պայմաններում:

Ձևավորվող բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում, հաշվի առնելով կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջև քաղաքական պայքարը, ընդդիմադիր և իշխանամետ ուժերի սուր հակամարտությունը, ծայրահեղականության և բռնության դեմ պայքարը դառնում է համապետական նշանակության հիմնախնդիր: Կասկած չի հարուցում նաև այն հանգամանքը, որ անձի, հասարակության և պետության դեմ սպառնալիքների տեղայնացման գործում որոշիչ դեր պետք է կատարեն ՀՀ իրավապահ մարմիններն ու հատուկ ծառայությունները: Խնդիրն այն է, թե որն է այդ դերը, ու որոնք են սահմանները քաղաքական ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարում:

Անշուշտ, անվտանգության մարմինների աշխատակիցները պարտավոր են քաղաքականապես մոտիվացված բռնության սպառնալիքները չեզոքացնել և կանխել բացառապես գործող օրենսդրության շրջանակներում՝ որևէ կերպ կամ նույնիսկ ամենապատեհ պատճառաբանությամբ չխախտելով նրա սահմանները:

Սոցիալ-քաղաքական հարաբերությունների դաշտում տեղի ունեցող և քաղաքական ծայրահեղականություն ծնող բախումներն անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների ոլորտի հետ: Եթե մենք ոչ միայն խոսքով, այլև գործով նպատակ ունենք ընթանալ իրավական պետություն կառուցելու ուղով, քաղաքացիների աշխարհայացքի, գաղափարական հակումների և քաղաքական համոզմունքների հանդեպ հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների վերաբերմունքը պետք է լինի հնարավորինս հանդուրժողական, զսպված և բարեկիրթ: Այս պնդումը հատկապես արդիական է անկայունության բարձր մակարդակով, տնտեսական, քաղաքական և սոցիալական հարաբերություններում կուտակված հակասությունների բացառիկ սրությամբ բնութագրվող մեր իրականության պայմաններում:

Քաղաքական ծայրահեղականության դեմ պայքարի ոլորտում հատուկ ծառայությունների գործունեության մեջ օրենքից ցանկացած շեղում հղի է համաշխարհային հանրության մշտական ուշադրության կենտրոնում գտնվող մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ:

Դիտարկելով անվտանգության մարմինների դերը քաղաքական ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարում՝ պետք է ընդգծել, որ տարբեր են զանազան ծայրահեղական դրսևորումների պատճառներ ծնող և այդ երևույթներն արձանագրող ոլորտները:

Ծայրահեղականության երևույթների և սպառնալիքների ծագմանը և զարգացմանը զուգընթաց՝ այս կամ այն պետական կառույցների կողմից բացասական գործընթացների զարգացումը կասեցնելու կամ չեզոքացնելու տեսանկյունից տեղի է ունենում իրավասությունների պառակտում: Մեր կարծիքով՝ հակասահմանադրական բռնի գործողություններ հրահրող գործոնների թվին կարող են դասվել բնակչության կենսամակարդակի անկումը, քաղաքական պայքարի սրացումը, բնակչության սո-

ցիալական անապահովվածության բարձրացումը, պետական ապարատի համակարգային անարդյունավետությունը:

Ինչպես տեսնում ենք, ահաբեկչություն և հակասահմանադրական ոտնձգություններ վերարտադրող գործոնները, որոնց բացահայտմանը, կանխմանը և կանխարգելմանն են նպատակաուղղված անվտանգության մարմինները, հաճախ ի հայտ են գալիս երկրի սոցիալ-քաղաքական և տնտեսական կյանքի այն ոլորտներում, որոնց վրա հատուկ ծառայություններն ու իրավապահ մարմինները ոչ միայն չեն կարող ազդել, այլև չունեն իրավունքներ: Հակառակ դեպքում վերջիններս անխուսափելիորեն պետք է դուրս գան իրենց իրավասությունների և լիազորությունների շրջանակներից և կորակվեն որպես հակաիրավական և հակասահմանադրական:

Նշված հանգամանքը քաղաքական ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարում թելադրում է պետական իշխանության և իրավապահ ու անվտանգության մարմինների սերտ համագործակցության անհրաժեշտություն: Այսպես, ահաբեկչություն և ծայրահեղականություն հրահրող գործոնների բացահայտման և վերացման գործում ՀՀ ԱԱԾ մարմինները ժամանակին տեղեկատվության ստացման, իրադարձությունների զարգացման կանխատեսման, շահագրգիռ պետական կառույցներին կանխիչ իրազեկման, ինչպես նաև պայթյունավտանգ իրավիճակի կայունացմանն ուղղված կոնկրետ առաջարկությունների ճանապարհով բոլոր մակարդակներում կարող են գործուն աջակցություն ցուցաբերել ներկայացուցչական իշխանության մարմիններին:

Խոսելով ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարում անվտանգության մարմինների և իրավապահ համակարգի տեղի ու դերի մասին՝ անհնար է ուշադրություն չդարձնել այս գործունեության ոլորտում նրանց յուրօրինակ կարգավիճակին: Մի կողմից՝ ՀՀ ԱԱԾ մարմինների աշխատակիցներին օրենսդրությամբ չի թույլատրվում զբաղվել քաղաքական գործունեությամբ, մյուս կողմից՝ նրանք պարտավոր են իրագործել պետության քաղաքականությունը և կանխել ազգային անվտանգությանը սպառնալիք հանդիսացող քաղաքականապես մոտիվացված գործողությունները:

Անվտանգության մարմինների խնդիրը սուր և հիվանդագին սոցիալական կոնֆլիկտներ ստեղծելու ունակ հնարավոր անվերահսկելի

իրավիճակի զարգացման, հակահիրավական բռնի գործողությունների, ազգային անվտանգության սպառնալիքների, մարդկային և նյութական կորուստների, քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի բացասական ազդեցությունների կանխումն է:

Ազգային անվտանգության մարմինների կողմից վտանգավոր իրավիճակների զարգացումը կանխելուն ուղղված անհրաժեշտ միջոցներ կիրառելու հիմք, ընդհանուր գծերով, կարող են հանդիսանալ.

- կոնկրետ անձանց վարքի դրսևորումները, որոնք թեև դեռևս հանցավոր չեն, սակայն հակված են հակահիրավական զարգացման,
- բռնի հակասահմանադրական գործողություններ և ահաբեկչություն առաջացնող պատճառների կամ դրանց կատարմանը նպաստող պայմանների բացահայտումը:

Այս դրույթն անհրաժեշտ է ամրագրել օրենսդրությամբ՝ ենթաօրենսդրական գերատեսչական ակտերում առավել մանրամասնորեն ձևակերպելով ՀՀ իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների կողմից հարկադիր-կանխարգելիչ հակազդման հիմքերի որոշման ալգորիթմը: Այդպիսի ալգորիթմի կառուցման մեխանիզմը պատկերվում է հետևյալ կերպ՝ հակահիրավական գործողությունների որոշակի շրջանակի կանխման համար պատասխանատու յուրաքանչյուր գերատեսչություն, հենվելով կուտակված փորձի, վիճակագրության, սոցիոլոգիական հետազոտությունների և վերլուծության վրա, ուսումնասիրում է դրանցից յուրաքանչյուրի ծագումնաբանությունը: Այսպիսով, հիշյալ բնույթի գործողություններից ամեն մեկի համար ստեղծվում է նախահանցավոր գործողությունների շղթա, որտեղ յուրաքանչյուր օղակ տվյալ մարմնի կողմից կարող է դիտարկվել որպես հիմք նախազգուշական կանխարգելիչ հակազդման համար: Ընդ որում, պետք է նկատի ունենալ երկու հանգամանք. առաջին՝ շղթայի մեկ առանձին վերցրած օղակ չի կարող հիմք ծառայել կանխարգելիչ մեխանիզմի գործարկման համար, այն պետք է դիտարկել ուղեկից տարրերի հետ փոխադարձ կապի մեջ, որպեսզի ապացուցվի իրադարձությունների վտանգավոր քրեածին զարգացումը: Այդպիսի դինամիկայի մասին կարող են վկայել գործողությունների կրկնությունը, ազգա-

յին անվտանգությանը սպառնալիքներ պարունակելը, քրեածին գործընթացներում ներգրավված անձանց թվի մեծացումը: Երկրորդ՝ հարկավոր է հստակեցնել, որ նախահանցավոր գործողությունների վերաճումը հակահիրավականի տեղի է ունենում սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների դիալեկտիկական փոխազդեցության ընթացքում, ընդ որում՝ առաջինի դերում հանդես են գալիս բռնության սպառնալիքների պոտենցիալ կրողի անձնային բնութագրերը (սոցիալ-հոգեբանական, քաղաքական, տարիքային և այլն), իսկ երկրորդի դերում իրական հանգամանքներն են, որոնք սուբյեկտին (անհատ, խումբ, կոլեկտիվ, բնակչության շերտ և այլն) դրդում կամ անուղղակիորեն խրախուսում են ծայրահեղական արարքների:

Այսպիսով, իրավապահ և անվտանգության մարմինների կողմից առանձին անձանց քաղաքական ծայրահեղականության և ահաբեկչության դրսևորումներին հակազդմանն անմիջականորեն մասնակցելու հիմք պետք է հանդիսանա նրանց վարքում քրեածին հարաճունությունը: Ինչ վերաբերում է քաղաքականապես մոտիվացված բռնության գործոնների վերացման գործընթացում անվտանգության մարմինների և իրավապահ համակարգի դերակատարությանը, այն հիմնականում նրանց գործունեության մեջ տեղեկատվական գործառույթի իրացումն է: Ցանկացած պարագայում անթույլատրելի է հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների մասնակցությունը սահմանադրական շրջանակներում տեղի ունեցող քաղաքական հակամարտություններին:

Ամփոփելով նշենք, որ անվտանգության մարմինների և իրավապահ համակարգի օպերատիվ և ղեկավար կազմին քաղաքական ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարում հաջողությունը հենց այնպես չի տրվելու: Դրան հասնելու համար պետք է կենտրոնում և տեղերում իրավիճակի խոր և բազմակողմանի վերլուծություն, գործի հանդեպ ստեղծագործական մոտեցում, բոլոր շահագրգիռ մարմինների, հասարակության, ԶԼՄ-ի, եկեղեցու և օրինապահ քաղաքացիների հետ համագործակցություն: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել դիտարկվող ոլորտում կանխարգելիչ գործունեությանը, քանի որ պետության և հասարակության համար աղետալի են յուրաքանչյուր ահաբեկչական ակցիայի քաղաքական, տնտեսական, սոցիալական և բարոյական հետևանքները:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 11.07.2017թ.
Թիվ 6 (85), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում